

# Այունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՀԱՐԱՐ  
28 ՓԵՏՐՎԱՐԻ 2015Թ. №6 (349)

**Անդրանիկի մասին  
բան շինանալը  
հավասար է  
իր ժողովրդի  
դասնությանը  
անգեթ լինելուն:**  
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ



**Կառավարությունը  
հավանություն տվեց Որոտանի  
հեկերի համալիրի վաճառքի  
նորացված պայմանագրին**

Կառավարությունը փետրվարի 19-ի նիստում հավանություն է տվել «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության առուվաճառքի պայմանագրի լրամշակված տարբերակին:

Ըստ գործադիրի լրամշակված տարբերակը բարեփոխված է եւ նպատակ ունի կողմերի իրավահարաբերություններն առավել հավասարակշռված եղանակով կարգավորել: Փաստաթուղթը կառավարության անունից ստորագրելու լիազորությունը վերապահվել է եներգետիկայի եւ բնական պաշարների նախարարին:

Հայաստանի կառավարությունն ամերիկյան «Կոնտուր գլոբալ հիդրոկասկադ» եւ «Սի-Ջի սոլյուշնս գլոբալ հոլդինգ քամփնի» ընկերությունների հետ Որոտանի հեկերի գույքի առուվաճառքի մասին պայմանագիր ստորագրել էր 2014-ի հունվարին:

Ամերիկյան «Կոնտուր գլոբալ» (Contour Global) ընկերության կողմից Որոտանի հեկերի համալիրը գնելու շուրջ 33 կառավարության հետ բանակցությունների մասին հաղորդագրությունը տարածվել էր 2013թ. հունիսին, իսկ նոյեմբերի 23-ին ԱՄՆ պետքարտուղարությունը հաղորդել էր, որ «Կոնտուր գլոբալ» ընկերությունը 180 մլն դոլարի ներդրում կանի Հայաստանի եներգետիկ ոլորտում: 33 համարյաին ծառայությունները կարգավորող հանձնաժողովը 2014թ. նոյեմբերի 27-ին թույլատրել էր պետական «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի» գույքը վաճառել «Կոնտուր գլոբալ հիդրոկասկադ» ընկերությանը:

Գործարքը Հայաստանում քննադատության է արժանացել կոռուպցիոն ռիսկերի առումով. առուվաճառքի պայմանագրով գումարը փոխանցվելու էր ոչ թե Հայաստանի կառավարության անմիջական տնօրինությանը, այլ հեկերը շահագործող պետական ընկերության հաշվին դրանից բխող չարաշահումների ռիսկով: Բացի այդ, գործարքը չէր հաստատվելու Ազգային ժողովի կողմից: Դեկտեմբերին հայկական կողմը հայտարարեց, որ «ձգձգումների պատճառ հանդիսացող հարցերը լուծված են»:

Որոտանի հեկերի համալիրին բաժին է ընկնում Հայաստանում արտադրվող էլեկտրաէներգիայի մոտ 15 տոկոսը:

**ՍԵՎ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

## Մեղրու փարածաշրջանային հիվանդանոցի շենքը նախապես ժամկետում պատրաստ կլինի

### Շինարարություն

«Այունյաց երկիր» թերթը պարբերաբար անդրադարձել է Մեղրու տարածաշրջանի բժշկական հաստատությունների կառուցվածքային փոփոխությանը. այս անգամ հերթական առիթը Մեղրի եւ Ազարակ քաղաքների միջակա վայրում կառուցվող հիվանդանոցային համալիրն էր: Ամիսներ առաջ հազիվ թե

գտնվեր մեկը, ով ենթադրեր, որ այդ հատվածում հիվանդանոց պետք է կառուցվի: Պատկերը փոխվեց հատկապես 2014թ. հոկտեմբերին, երբ որպես ենթակապալառու կազմակերպություն (կապալառու՝ «Պառքս-գազ» ՍՊԸ), հիվանդանոցի՝ անհարկի ձգձգվող շինարարական աշխատանքները ստանձնեց «Մեղրու ճանապարհների շահագործման եւ շինարարական ձեռնարկություն» ՍՊ ընկերու-

թյունը (տնօրեն՝ Ազատ Գասպարյան): Ամիսներ տեսած լայնածավալ աշխատանքների շնորհիվ շենքի երկրորդ հարկն էլ արդեն կանգուն է, եւ, Ազատ Գասպարյանի խոսքով, մեկերկու շաբաթից կանցնեն տանիքի կառուցման աշխատանքներին: «Աշխատանքների ներկայիս ընթացքը կատարվում է ըստ նախատեսված պլանի, հոսքային պարբերականությամբ ՇՆՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԷՋ 3

## Սյունիքում նշվեց Զորավար Անդրանիկի ծննդյան 150-ամյակը

### Հոբելյան

**Փետրվարի 25-ին Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ միջոցառումներ տեղի ունեցան Կապանում, Գորիսում եւ մարզի մի շարք այլ բնակավայրերում, կրթական հաստատություններում:**

Հոբելյանի առթիվ Կապանի մշակույթի կենտրոնի եւ ակունբագրարանային միավորման կազմակերպած գրական-երաժշտական համադրույթի միջոցով հյուրերը ծանոթացան Զորավարի գործունեությանը, նրա մասին նշանավոր մարդկանց կարծիքներին, նրան ձոնված բանաստեղծություններին, երգերին:

Գորիսում Զորավար Անդրանիկի հուշարձանին ծաղկեղրում կատարելուց հետո ներ-

կաներն անդրադարձան նրա գործունեությանը, իսկ «Միրիադ» ակունբը գրական հետաքրքիր ցերեկույթ պարզեց միջոցառման մասնակիցներին:

Սյունիքի հետ Զորավար Անդրանիկի առնչությունները հիմնականում վերաբերում են 1918-1919թթ.: Այդ մասին է նաեւ Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» վեպը, որի մի հատվածը ներկայացնում ենք ընթերցողին (էջ 4-5):

Զորավար Անդրանիկի նստավայրը Գորիս քաղաքն էր, որտեղ ժամանեց 1918թ. օգոստոսի 3-ին եւ հեռացավ 1919թ. մարտի 25-ին: Սիսիանի Գորիսում ժամանակին հավերժացվեց Զորավարի հիշատակը, ինչի մասին իմանում ենք «Ձանգեզուր» թերթի 1989թ. հուլիսի 6-ի համարից (էջ 2):

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



### ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

**Մեղրու ճանապարհաշինական ձեռնարկությանը՝ մրցանակ**

Ս.թ. փետրվարի 19-ին ՀՀ կառավարությունն ընդունել է որոշում «Արտադրանքի եւ ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. մրցանակներ շնորհելու մասին»:

ՀՀ կառավարությունը, արտադրանքի եւ ծառայությունների որակի ապահովման բնագավառում ձեռք բերած նշանակալի արդյունքների, ինչպես նաեւ որակի կառավարման արդյունավետ մեթոդների ներդրման համար, արտադրության եւ ծառայությունների որակի ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մրցանակներ է շնորհել հանրապետության մի քանի կազմակերպությունների, այդ թվում՝ «Մեղրու ճանապարհների շահագործման եւ շինարարական ձեռնարկություն» ՍՊ ընկերությանը (տնօրեն՝ Ազատ Գասպարյան):

# Անդրանիկը սրբությունն. աչքի լույս

Մինասյան Անիկան՝ ծնված 1902 թվականին, Գորիս քաղաքում, պատմում է.

- Այն ժամանակ ես 16 տարեկան էի: Քաղաքը հարայ-հրոց ընկավ. Անդրանիկն է գործի հետ գալիս: Բոլորս՝ մեծ ու փոքր, ցնծությամբ դուրս եկանք դիմավորելու: Քիչ անց փոշու հսկա ամպ բարձրացնելով, երեսաց Անդրանիկը՝ գործի գլուխն անցած: Օղջ թնդում էր գործի երգե-րից, որի մեջ, հիշում եմ, կային այս-

պիսի տողեր.

*Ներոն մոնչա՛ց՝  
Մուլթան դողողողաց,  
Կովի սիրտահար  
Ներոն-Անդրանիկ՝ -  
Միշտ էլ կանգուն ես  
Մեր փառաբանած...*

Ամուսինս՝ Վաղարշակը, ես տեգրս՝ Սկրտիչը, գնացին Անդրանիկի մոտ, ասին. «Զինվոր տվեք, պահենք մեր տներում»: Անդրանիկը երկու հեծյալ զինվոր տվեց, որոնց բերեցինք, մի-

ջե գործը քաղաքից հեռանալը պահեցինք աչքի լույսի պես:

Հիշում եմ հրապարակի վրա բացվող պատշգամբից Անդրանիկի ճառը:

- Սիրելի հայրենակիցներ, - ասում էր նա, - Ձանգեզուրի գավառը կպաշտպանենք արյան մինչև վերջին կաթիլը եւ երբեք մեր երգիչը չենք տա գարշելի թուրքին:

Մենք լաց էինք լինում, համբուրում այն հողը, որտեղ Անդրանիկի

ուղբն էր դիպչում:

Մեր տնից Անդրանիկի գործին նվիրեցինք ձի, ջորի, իսկ տեգրս երկար ժամանակ Անդրանիկի գործի հետ մասնակցում էր բոլոր կռիվներին:

Թոնրի մի կրակ վառելով, մեր տանը թխվում էր տասը փաղաղ (տաշտ) հաց, որը բոլորն էլ բաժանում էինք Անդրանիկի զինվորներին:

Անդրանիկը սրբություն էր, Անդրանիկը մեր աչքի լույսն էր, եւ մենք նրան էինք տալիս ամենասուրբը՝ մեր հոգին ու մեր պատահացը:

«Ձանգեզուր»  
6 հուլիսի 1989թ.

# Մեր ազգային սնապարծության մասին

**Եթե առօրյա կյանքում որեւէ մեկը արգահայտություն թույլ տա մեր ազգային արժանապատվությունը վիրավորելու իմաստով՝ մեզանից յուրաքանչյուրն իր հնարավորությունների սահմաններում կապտապանի այն, իսկ եթե դա կարարի այլազգին, համոզված եմ, անհրաժեշտության դեպքում գործի կրվելն նաեւ արարները: Բայց երբ դա կարարում է թո հայրենակիցը՝ իր «լավ» ցանկություններով՝ կանգնում էս երկնսրանքի առջեւ, ինչպես այժմ էս եմ կանգնած: Մեկ՝ ձեռքս մեկնում եմ գրչին, մեկ՝ հեղ պահում: Ախր ես ո՛վ եմ, որ գրիչ վերցնեմ ու պաշտպան կանգնեմ ազգային արժանապատվության, կան չե՛ հարյուրավոր գիտական բարձր կոչումներով, անշուշտ, նաեւ կարողությամբ այրեր, ովքեր դա փաստյակ անգամ ավելի լավ կարող են կարարել, քան ես, քան ինձ նմանները:**

Բայց մյուս կողմից էլ ականատեսն եմ, որ ազգիս մեծերը լուռ են, իսկ նրանց կողքին նորաթուխ «գիտնականները» կամ վայ մտավորականները գրիչ են վերցնում, օգտվում սոցցանցից եւ ազգիս անունն ու պատիվը գետնով տալիս, իրենց խակ մտքերով ցանկանում «սուպեր» հայրենասերի տպավորություն թողնել: Ու սրանց երեսից ազգային արժանապատվություն ավանդ ձեռքից գնում, պրծնում է: Այո, ազգային սնամիտությունը ծայրահեղության է հասել:

Ինչ-որ մեկը ինչ-որ տեղից պեղել է կամ ինչ-որ մեկի ականցովն է ընկել, որ, ասենք, Ուրուզվայի երիտասարդության, տուրիզմի եւ սպորտի նախարարը հայուհի է, ու այդ «սենսացիոն» լուրը իսկույն տեղ է գտնում հայկական լրատվամիջոցների առաջին էջերում, տողերում, կայքերում... Մի քանի օր շրջանառվում է՝ մինչեւ հաջորդ «սենսացիոն» լուրը, իսկ այն հետեւյալն է. «Բարսեւլունայի» հայտնի հարձակվող այսինչի առանձնատունը մի հայ է գնել: Սրան էլ փոխարինելու է գալիս հաջորդ «հայտնագործությունը»: Ընդունելով որպես հիմնավորված տարրերի պարբերական համակարգի՝ Մենդելեևի կողմից երազում հայտնագործված լինելու փաստը, իրենք էլ իրենց հերթին են մի նոր հայտնագործություն կատարում: Իմաստը հետեւյալն է՝ Մենդելեևից մոտ 1500 տարի առաջ դա հայտնագործել է ոչ ավել ոչ պակաս մեր համաբարձր՝ Մեսրոպ Մաշտոցը: Ըստ այս տեսության համահեղինակ Արմենուհի Փալանդուզյանի՝ ոսկի, մեղալգաթ, կլակ, արճիճ, սնդիկ բառերի տառերի այբուբենում հերթական համարների գումարը տալիս է տարրի կարգային համարը: Օրինակ, ոսկի բառի տառերի՝ հերթական համարներն այբուբենում համապատասխանաբար 29, 29, 15 եւ 11 է, որոնց գումարը՝ 79, ինչպիսին ոսկի տարրի կարգային համարն է պարբերական համակարգում: Իրենց «հայտնագործությունը» ընդհանրացնում են հետեւյալ կերպ. «Այժմ մնում է մտածել՝ Մենդելեևի երազում հայերենը որեւէ դեր խաղացե՞լ է, թե՛ արարիչը տեսնելով, որ մեր հիմնավորը լեզվի ու այբուբենի մեջ գաղտնագրված գիտելիքն այդպես էլ մարդկության սեփականու-ՇՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԷՑ 8



Գորիս քաղաքի Մաշտոցի 19 փունը, որպեղ ապրել է Ջորավարը

# Սյունեցին երկար է սպասել, որպեսզի մի օր Անդրանիկը վերադառնա՝ իբրեւ հուշարձան կամ իբրեւ հուշ, վերադառնա երիցս սրբագործված եւ մայր հողում փառավորյալ՝ հսկի անդորրը...

## Ստասդեյական հառնում

Արդ, Անդրանիկի առասպելը հառնեց, ընդմիջտ ծոցվորվեց ժողովրդի հոգում, եւ գորիսեցին Սասնա ծռի նվիրական անունն անթեղած այսօր նրա կենդանի հուշարձանին սրտի գորովն ու երախտիքն է նվիրաբերում, ծնրադիր՝ ծաղիկներով ու համբույրներով ցնցուղում այն: Լենինի N19 տունը, որտեղ ապրել է Անդրանիկը, սրբավայր է դարձել, եւ գորիսեցին տան դարպասի կողքին դրված հուշարձանին մոտենում է իբրեւ սուրբ-սրբոցի, իբրեւ կենդանի ու նաեւ առասպել դարձած ոգեղեն կերպարի: Ժողովուրդն այսպես է աստվածացրել ու օրհնել Սասնա Մհերի ու Դավթի, Արա Գեղեցիկի, Կահագնի լուսավոր ծնունդները, որոնք օժել են հայրենյաց ոգին ու հողը՝ իրենց լեզունը դարձած գոյությանը:

Հիրավի, Անդրանիկն էլ մի լեզուն էր:

...ՔԱՂԱԹԸ տիրավոր է դարձել, ոգեկուռ ու ամրակուռ, դարձել է պատմությանն ու դարերին հաղորդ, գալիքին ծուլված...

Եվ եթե ընդամենը մեկ-երկու տասնամյակ առաջ գորիսեցու հո-

գործը:

Երկար կենսագրություն չունի երիտասարդ քանդակագործը: Ծնվել է 1959 թվականին, Կիրովականում: 1981 թվականին ավարտել է Երեւանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը, ամուսնացել է համակուրսեցի, գորիսեցի գեղանկարչուհի Մարինե Սահակյանի հետ: Նրա առաջին եւ վերջին ուսուցիչը եղել է մնում է հայրը՝ քանդակագործ Բաբկեն Պետրոսյանը, որի հետ միասին Արշակը քիչ աշխատանքներ չի կատարել հայրենի քաղաքում:

Ցանկալի եւ անհրաժեշտ էր նրա հետ հանդիպումը, գրույցը՝ հուշարձանի աշխատանքների, մոտիկ եւ հեռու ծրագրերի մասին:

- Արշակ, ե՞րբ սկսեցիր հուշարձանի պատրաստման աշխատանքները, եւ մտահղացման իրակա-նացումը հոգեւոր ինչպիսի ճիգեր պահանջեց քեզանից:

- Հուշարձանի պատվերի



Ջորավարի հուշարձանը Գորիսի Մաշտոցի 19 փուն մուրթի մոտ

առաջարկն ու հոգու իմ ներքին մղումը, անբացատրելի պահանջն ասես համընկան իրար հետ: Դա հունվար ամսին էր, հայ ժողովրդի ծանր վշտի օրերին: Մեզանից յուրաքանչյուրն ակամա խոնարհվում էր իր արմատներին եւ փորձում գորեղացած հառնել: Պահանջ կար հերոսական ոգու, կերպարի արարման, հայ ժողովրդի գոյատեւման հավաստի վկայակոչման:

Հունվարին սկսեցի Մեծ Ջորավարի հուշարձանի կառուցման աշխատանքները, եւ մինչեւ հայոց նախորդ արհավիրքի հիշատակի օրը՝ ապրիլի 24-ն արդեն հուշարձանը պատրաստ էր:

Նախքան աշխատանքները սկսելը եւ առավել մանրակրկիտ ծանոթացա Անդրանիկի կյանքի ու հերոսական գործունեությանը, նրա սովորույթներին, հագուկապին, կենցաղին, ամենափոքր իսկ մանրամասն ինձ համար նոր աշխարհ էր բացում, նոր անկյունից էր երեւում Հայոց Ջորավարը: Իսկ հետագայում, աշխատանքի պահին, երբ քանդակում էի Ջորավարի արծվե-նի հմայքով ողողված դեմքը, ինձ օգնում, ներքին լիքը էր հաղորդում ամենափոքր իսկ հուշը՝ նրա մասին ընթերցած-լսած, արյան կանչով շոշափելիորեն զգացած:

Անդրանիկի հուշարձանի պատրաստման հաջողությանը քիչ չեն նպաստել մեր ազգագրական երգե-րը (որոնք մշտապես լսում էի), ի վերջո, հոգու իմ ծգտումը, հայ ծնված լի-նելու երջանիկ իրողությունը:

Երբեմն հարցնում եմ ինչպե՞ս ընդունեցի հուշարձանի անշուք բացումը, կամ պարզապես ասում եմ՝ բացումն անշուք էր: Ես համամիտ չեմ այս «անշուքի» մտայնությանը: Մենք վարժվել ենք տոնական, շքեղ բացումների, միջոցառումների, ծափահարությունների: Ինձ, որպես քանդակագործի, բավարարում է եւ այն, որ ժողովուրդն ի սրտե ընդունեց հուշարձանը եւ դեռ այսօր ու միշտ կշարունակի ծաղիկներ դնել այնտեղ: Կարելիորը, կարծում եմ, սա է:

- Գորիսեցին ոչ միայն ջերմությամբ ընդունեց հուշարձանը, նաեւ գնահատեց նրա քանդակագործի աշխատանքը, եւ, բնականաբար, չի ցանկանա, որպեսզի սիրելի արվեստագետը շուտով թողնի քաղաքը... Քանդակագործական ի՞նչ անակնկալ է սպասվում մեր քաղաքին, մեզ:

- Ես ինքս էլ սիրեցի Գորիսը, նրա մարդկանց՝ պարզ, անկեղծ, հյուրասեր: Ինչ վերաբերում է անակնկալին, այն ավելին է, քան կարելի է սպասել: Գեղեցիկ մտահղացում կա. քաղաքում կառուցել ֆիդայիների պուրակ: Դարձյալ մեծագույն սիրով կմասնակցեմ այդ աշխատանքներին՝ անմահ ֆիդայիների քանդակով մեկ անգամ եւս բացահայտելով հայ ժողովրդի կերպարը, հավաստելով, որ մենք հարատեւող եւ լեզունդար կենսագրություն ունեցող ժողովուրդ ենք:

ՍՈՒՄԱՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ  
«Ձանգեզուր», 6 հուլիսի 1989թ.

# Редактору газеты “Сюняц еркир”

Уважаемый С. Алексанян!  
 Ознакомившись со статьей М. Мелкумян от 09.02.2015 г. я решил мой ответ Г.Джабраяну высылать Вам. Может быть статья написана немного эмоционально, не в стиле журналиста. Прочтите, пожалуйста, до конца и тогда решайте, что с ней делать. Если имеет смысл, отредактируйте и напечатайте ее, нет – выбросьте.



Очередной раз открывая пресс-конференцию с представителями СМИ и общественности Г. Джабраян заявил, что прошедший год был неблагоприятным и убыточным для предприятия, поэтому им пришлось отказаться от многих социальных и инвестиционных программ. Далее в том же ключе: «2014-й был довольно тяжелым и план производства был выполнен на 70%, а реализация продукции всего на 60%» отметив, что причиной невыполнения плана явилась неправильная организация подготовительных (нахапатрастан) работ. Один словесный понос! Послушай клоун, я напомню тебе что на пресс-конференции два года назад я высказался о непрофессионализме твоей команды, обосновав это приведенными тобой же неудовлетворительными результатами их работы. По итогам работы в 2013 году ты снова твердил о великолепной команде, которая опять провалила выполнение плановых показателей, а в интервью М.Мелкумян, честно признавая провал планов 2014 года ты вновь «уверен в великолепных (лавагуйн) капанских специалистах, которым нужно время, чтобы направить работу предприятия в нужное русло». Вот что я скажу, провалы по работе это исключительно твоя вина! Ты уже четыре года директор (англ. direct-направление) и руководитель коллектива, обязанного по правильному вести коллектив к решению поставленной цели. Что будет если симфонический ор-

кестр будет играть без дирижера?... Абсолютное отсутствие аналитического мышления, слабые профессиональные знания, руководство коллективом, основанное на эмоциях и лживом патриотизме, то есть никакие деловые качества, подразумевают для тебя лишь одну должность для работы - должность менеджера по «организации корпоративных вечеров», чем ты и прославился по известным широкой публике еженедельным дегустациям со своей командой дорогого спиртного в различных питейных заведениях города.

Неоспорим факт, что со дня передачи месторождения в аренду иностранцам план производства никогда не выполнялся, несмотря на хорошую оснащенность производства современным горным оборудованием. И совсем непонятно как можно все время твердить об убыточности месторождения и продолжать его разработку. Отсюда можно сделать вывод, что добыча руды экономически оправдана, но это обстоятельство скрывается от общественности, чтобы не обременять себя различными обяза-

тельствами.  
 А если по отчетности предприятия действительно убыточное, то там, однозначно, ведется двойная бухгалтерия и не выплачиваются налоги на прибыль!!! Ничем другим это не объяснить! Никто не станет разрабатывать убыточное месторождение с надеждой на улучшение условий в перспективе, ну разве что сумасшедший. Тем более что с углублением горных работ условия разработки ухудшаются а себестоимость возрастает из-за увеличения расходов на поддержание, вентиляцию, проветривание большей сети выработок и ряда других обстоятельств.

Грач, ты заявил, что поднял зарплату 477 работникам от 5 до 30%. Вполне вероятно, что это очередной хитро продуманный трюк: низкооплачиваемым категориям работников поднять на 30%, а высокооплачиваемым на 5-10%, работников же со сдельной оплатой «предоставить возможность» самим регулировать свою зарплату за счет премиальных вознаграждений.

А твое заявление что вы «дер-

жите около 300 человек просто так, учитывая социальные условия города», вообще не выдерживает никакой критики. Ты что, платишь им из «своего кармана»? Ты не выполняешь план, несешь убытки и просто так выплачиваешь жалование? Абсурд какой-то! Только не говори, что Дж. Гудман в курсе твоих инсинуаций! Так как разработка жильных месторождений отличается высокой трудоемкостью совсем неплохо иметь резерв в 300 человек. Твоим «специалистам» просто остается пошевелить мозгами, если таковые у них имеются, и обеспечить их фронтом работ и достойной зарплатой.

Все, что связано с разработкой месторождения: договор концессии и условия его получения и расторжения; себестоимость продукции, объемы балансовых и погашенных запасов и содержание металла в них; сведения о попутных компонентах в руде и их учете; размеры прибыли и налогов и многое другое, которыми можно оценить работу компании предъявить ей претензии, надежно защищено пресловутым (тхраһрчак) понятием «коммерческая тайна». О какой гласности может идти речь на таких пресс – конференциях, когда руководство компании может представлять ему удобные данные, а общественность, в силу своей некомпетентности в горном деле, сможет сформулировать только вопросы типа « сколько потрачено на озеленение или помощь бездетным», к примеру. Такие конференции иначе, как фарисейством и профрофмой для демонстрации призрачной гласности деятельности компании, не назовешь.

Составлять календарный план горных работ без должного обоснования и систематически срывать его выполнение, обеспечивая прибыль, заявлять о понесенных многомиллионных убытках; допускать повсеместно технологические ошибки, в результате чего добывать руду с низким содержанием компонентов и списывать балансовые запасы, как неподтвер-

жденные и максимально используя дешевую рабочую силу вести избирательную отработку месторождения полностью игнорируя требование «Кодекса РА о недрах» о рациональном и комплексном ее использования, - ВОТ СТИЛЬ ВАШЕЙ РАБОТЫ.

Обещания за свой счет построить памятник членам группы Ассала, погибшим в Лиссабоне, беззащитное использование по любому поводу имен Гарегина Нжде и Вардана Мамиконяна, масса других высказываний о преданности Родине, патриотические песнопения во время распитий водки - и все для одной цели – пиара своей личности и завоевания доверия общественности. И почему в интервью, когда речь шла о производстве, ты вдруг заговорил о планировании «крупного» мероприятия, посвященного 100-летию Геноцида, и «великодушно» сообщил, что компания в этот день работать не будет. Ты что, допускаешь, что кто-то мог выйти на работу в такой день? Нет, ты не дурак, ты хуже, ты - мразь, которая даже день поминовения трагических событий хочет использовать для пиара своей личности.

Вызывает глубокое сожаление и горечь то обстоятельство, что такое уникальное месторождение отдано тебе и твоей прислуге на разграбление, тем, кому глубоко безразличны наша Родина и ее благополучие в будущем.

Мой добрый совет тебе, как неудавшемуся менеджеру и пустомеле (датарк хосацох) вали из нашей страны, чтоб тебя не раскусили и уволили, чтоб навсегда может сломать карьеру в горном бизнесе.

**С. С. Гаспарян**  
 Экс главный инженер  
 Капанского ГОК, кандидат  
 технических наук

**Խմբագրության կողմից**  
 Ս.բ. փետրվարի 18-ին ստացված  
 սույն նամակը ներկայացնում  
 ենք առանց միջամտության եւ  
 մեկնաբանության:

# Մեղրու փարածաշրջանային հիվանդանոցի շենքը նախապեսված ժամկետում պատրաստ կլինի

ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

աշխատում ենք: Եթե աշխատանքի խզում չլինի՝ պայմանավորված շինանյութի բացակայությամբ կամ եղանակով, ապա նախատեսված ժամկետում՝ մինչև 2015թ. սեպտեմբերի 30-ը, շենքն ամբողջովին պատրաստ կլինի, եւ կհանձնենք շահագործման», - հավաստիացնում է Ազատ Գասպարյանը:

Շենքը տիպային է լինելու՝ նախատեսված համեմատաբար փոքր տարածաշրջանի համար՝ նկուղի հետ միասին եռահարկ, 60 մահճակալանոց, վերելակով: Առաջին հարկում տարբեր բաժանմունքներ կլինեն, իսկ երկրորդ հարկում՝ հիվանդասենյակներ: Բնականաբար, պոլիկլինիկական հիվանդանոցի հետ միեւնոյն վայրում չի լինելու: Ասեկոսների տեղիք տվող դիախերոնարանի համար էլ նախագծում ոչինչ չկա, ինչպես նաեւ առայժմ լուծված չէ շտապօգնության մեքենաների կայանատեղիի հարցը: Ազատ Գասպարյանի հավաստմամբ՝ շատ հավանական է, որ նախագծում փոփոխություններ տեղի ունենան, քանի որ այն կազմելիս երբեմն որոշ նրբություններ հաշվի չեն առնում: Իսկ դիախերոնարանն ու պոլիկլինիկական, ըստ երեւոյթին, կմնան ներկայիս տեղերում:

Շինարարական աշխատանքի պատվիրատու ԳՀ առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ»-ը հետևողական է

ամեն հարցում, նույնիսկ շենքի կառուցման համար նախատեսված շինանյութը օգտագործելուց առաջ լաբորատորիայում ստուգում են, ինչպես նաեւ իրականացնում պարտադիր տեխնիկական զննում: Բացի դրանից՝ հմուտ ճանապարհաշինարարի խոսքով՝ սա իր համար համեմատաբար խորթ ոլորտ է, եւ ԾԻԳ-ի հետևողականության շնորհիվ կանխվում են հնարավոր թերություններն ու բացթողումները՝ հետագայում տհաճ իրավիճակներից խուսափելու համար: «Իմ յուրաքանչյուր առաջարկի, որ միտված է շինարարության որակի ապահովմանը, ԾԻԳ-ը մշտապես ընդառաջում է», - նշեց Ազատ Գասպարյանը:

Վերջին ամիսներին արժուպային շուկայի «վայրիվերումները» իրենց հետքը թողեցին նաեւ շինանյութի գների վրա: Մոտ 20 տոկոսով բարձրացել է շինանյութի գինը, եւ պատվիրատուն հավանաբար կվերանայի շենքի կառուցման համար նախապես տրամադրված գումարի չափը (մրցույթով՝ 1 մլրդ 52 մլն դրամ), այլապես լուրջ խնդիրների առաջ կկանգնենք:

Մասնագիտացված աշխատուժի հարցն անհրաժեշտության դեպքում լուծում են տարբեր վայրերից հրավիրված արհեստավորների միջոցով (հիմնականում՝ Կապանից), իսկ տեխնիկայի խնդիր ընդհանրապես չունեն: Ժամանակը, ինչու չէ, նաեւ ֆինանսական միջոցները խնայելու համար շինանյութի մի մասը ձեռք են բերում Իրանի Իսլամական Հանրապետություն-



Ազատ Գասպարյան, «Մեղրու ԾՇՇ» ՍՊԸ տնօրեն

նից: «Բարիդրացիական հարաբերություններ ենք հաստատել մեր հարեւան գործընկերների հետ: Բնական է, այդ վստահությունը ձեռք ենք բերել ժամանակի ընթացքում՝ տարբեր շինարարական աշխատանքներ կատարելիս», - հավաստում է Մեղրու ճանապարհաշինական ընկերության տնօրենը:

Ժամանակին հիվանդանոցի շենքի տեղի ընտրությունը տարակարծության եւ դժգոհության տեղիք տվեց, բայց, շինարարի կարծիքով, այսօր, երբ շենքն արդեն իր տեսքն է ստանում, եւ շրջակա միջավայրի կանաչապատ տարածքներն արդեն իսկ տեսանելի են, երկու բաղաբի՝ Մեղրու եւ Ազարակի համար մեկ հի-

վանդանոցի շենքի տեղի ընտրության ճշտությունն ակնհայտ է ու անվիճելի:

Տարածքի ցանկապատման, կանաչապատման աշխատանքներ նույնպես նախատեսված են: Ինչ վերաբերում է կոյուղաջրերին, ապա այդտեղ կգործի կենսաբանական մաքրման կայան: Դրա շնորհիվ վերամշակված կոյուղաջրերը հնարավոր կլինի օգտագործել սանհանգույցի կամ էլ ոռոգման համար:

Մեղրու ճանապարհաշինարարները, բացի հիվանդանոցի շենքի կառուցումից, ներկայումս զբաղված են նաեւ Մեղրու ներքին ջրատար ցանցի վերակառուցման աշխատանքներով, ՊՆ զորամասի զորանոցի կառուցմամբ, ճանապարհների ձեռնարկի պահպանմամբ: Նախատեսվում է մրցույթ հայտարարել Դիբազի լեռնանցքի 4 կմ ճանապարհահատվածի հիմնանորոգման համար, ինչին անպայման կմասնակցի «Մեղրու ԾՇՇ» ՍՊԸ-ն: «Ինչպես բազմիցս եմ ասել, մեր ճանապարհներն արդեն ծերացել են, - հավելեց իր գործի վարպետ Ազատ Գասպարյանը, - Աստված տա, եղանակային պայմանները բարենպաստ լինեն, բոլոր աշխատանքներն էլ պատվով կկատարենք»:

Մեր այցելության օրը՝ փետրվարի 20-ին, լրացավ Ազատ Գասպարյանի ծննդյան 55-ամյակը, իսկ մեկ օր առաջ՝ փետրվարի 19-ին, «Մեղրու ԾՇՇ» ՍՊԸ-ն արժանացել էր ԳՀ կառավարության 2014թ. մրցանակին՝ արտադրանքի եւ ծառայությունների որակի ապահովման բնագավառում: Շնորհավորելով նրան ծննդյան օրվա եւ կառավարության մրցանակի արժանանալու կապակցությամբ՝ մաղթում ենք առողջություն, անսպառ եռանդ եւ անփորձանք ճանապարհներ:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### Գեղարվեստական գրականություն

# Ռանչպարների կանչը

## հատված համանուն վեպից

### Նահանջ եւ հաշտություն

Մեր մնացյալ ամբողջ գործը ու գաղթականությունը հավաքվեց Ջուլֆայի գլխին: Այդտեղ դարձյալ կռիվներ եղան եւ տիֆ ընկավ գործի ու ժողովրդի մեջ:

Ջուլֆայից եկանք Ազա: Ազայուն փաշան ասաց.

- Գնա Նախիջեանի սարը դիրք բռնիր: Նահանջ չտաս՝ ես հիմա կգամ: - Փոքրիկ մի գործ առա ու գնացի իր ցույց տված սարը: Նախիջեանի գլուխը դիրք բռնած սպասում եմ: Տեսնեմ մի քանի բեկեր Շահաբախի կողմից օսմանցու մեծ բանակ առած գալիս են ինձ վրա: Անդրանիկը ուշացավ: Տեսա, որ պաշարվում եմ, գործը ետ քաշեցի դիմացի սարը: Իմ գնալուց հետո փաշան գալիս է: Իմանալով, որ նահանջ եմ տվել, նեղանում է վրաս եւ մեծակ կրվելով օսմանցու դեմ, մութին հարկադրված գործը ետ է քաշում:

Եկանք Աբրակունիս: Ընդարձակ այգիներով շրջապատված գյուղ էր: Ձիվորներին տեղավորեց այգիների մեջ, իսկ հրամանատարներին տարավ վանք:

Այդտեղ Շահինանդն ասաց. «Ես ես ու՛ր չլուրն ընկած կերթամ: Ու՛մ մոտ կերթամ էսքան գործ ու ժողովուրդ մոտս պոչին կապած: Անգլիացո՛ւ մոտ կերթամ»:

Ու եղ գիշեր Անդրանիկը վանքում նստած նամակ գրեց Բաբու Ստեփան Շահունյանին՝ Նախիջեանի գավառը հայտարարելով Սովետական Ռուսաստանի անբաժան մասը եւ իր գործառնող դնելով Սովետների կառավարության տրամադրության տակ:

Աբրակունիսից եկանք Յոնա, որ Փարադաշտով գնանք Բեսու:

Ճանապարհին Անդրանիկի ձին կորավ:

Բարկացավ Յաջի Գետյի վրա: Շատ ման եկավ, գտավ իր ձին եւ Փարադաշտից քշեց եկավ Բեսու: Բեսուում բժիշկ Բոնապարտին ծեծեց, ինձ վրա գռռաց՝ թե ինչու նահանջ տվիր:

Առավոտ ելանք տեսանք Շապինանդը չկար: Վերցրել էր մի քանի տասնյակ ուղտ ու ջորի ու բռնել Քաջարանի ճամփան: Ես էլ կազմեցի իմ զորագունդը եւ Կապուտջուղ լեռան ձյուն ու ծաղկի միջով իջա Քաջարան: Քաջարանում ես Անդրանիկին բարեւ տվի՝ բարեւս չառավ: Նախիջեանի նահանջի պատճառով խռովել էր ինձ հետ: Ու եղպես իրարից խռով քաջերի երկրից ելանք գնացինք Պղնձե քաղաք:

Եղ քաղաքի անունը Կապան էր:

Քաղաքը ձորի մեջ էր, Ողջի գետի ափին: Ձորի ամենամեղ տեղը շինված էր Դավիթ Բեկի բերդը: Բայց ոչ Պղնձե քաղաքն էր աչքիս գալիս, ոչ էլ Դավիթ Բեկի բերդը: Իմ ամբողջ մտածմունքը Անդրանիկի հետ հաշտվելն էր: Մտածում եմ, թե ում գտնեմ, որ մեզ հաշտեցնի: Որոշեցի ճեպեճի Սարգսին դիմել կամ Յաջի Գետյիին: Պատրաստ էի նույնիսկ մի հասարակ ձիապանի դիմել, միայն թե գործը գլուխ գար: Վերջում կանգ առա Աղբյուր Սուսի վրա:

Գաղթականների մեջ շրջեցի, բայց Սուսեին չգտա: Գնացի դեպի այն ժամանակավոր կացարանը, ուր գործավարն էր տեղավորված:

Դուռը չբացած ականջիս հասավ կանացի մի բարկացած ձայն. «Տո, Անդրանիկ...»:

Մտածում էի, թե ո՞վ կլինի այդ կինը, որ համարձակվում էր գործավարին անունով կոչել եւ խստորեն հանդիմանել նրան: Դուռը կանաց բաց արի: Ներսում շատ մարդ կար: Մի կերպ ներս մտա եւ աննկատ կանգնեցի: Ջորավարը կուչ էր եկել թախտի վրա, իսկ նրա առաջ կանգնած էր մի ջլապ-ինդ, բարձրահասակ միևուր կին եւ անվախորեն դատափետում էր Անդրանիկին, որ միջոցներ ձեռք չի առնում սոված գաղթականությանը կերակրելու համար:

Սուսեն էր: Ոչ մի մեծավորի առաջ Անդրանիկը գլուխ չէր խոնարհում: Բայց հենց որ Աղբյուր Սուսե էր խոսում, թեկուզ եւ հրամայաբար, նա խեղճացած գլուխը կախում էր՝ ի հարգանք հայրուկապետ Սերոբի, որի զինվորն էր եղել ինքը:

Անհույս համարելով այլևս Սուսեի միջոցով Անդրանիկի հետ հաշտվելը, ես դուռը իմ ետեւից ծածկելով, կամաց դուրս եկա:

Մի հայտնի մարդ կար Կապանի մեջ: Ղարաբաղի էր, անունը՝ Սմբատ:

Սմբատ Բեկ էին ասում: Այդ դարաբաղցին մի շքեղ տուն էր շինել անտառի մեջ՝ Դավիթ Բեկի բերդի մոտ: Լսելով, որ գործավար Անդրանիկը Պղնձե քաղաք է եկել, Սմբատ Բեկը եկավ եւ նրան իր ապարանքը հյուր տարավ: Ուզում էր ինձ էլ տանել, բայց Շապինանդն ասաց՝ կամ ես, կամ նա:

Անդրանիկը չէր սիրում հարուստներին, բայց նրանց հրավերքին գնում էր եւ հանդիմանում նրանց: Երբեմն էլ խրճիթներում ապրող քվառ ժողովրդի վիճակը հիշելով, գայրույթից շուռ էր տալիս նրանց ճոխ սեղանները: Կարծում էի, թե այդպես կլինի նաեւ Սմբատ Բեկի հետ: Բայց տեսնեմ՝ հանգիստ ապրում է եւ բոլորովին էլ չի հիշում ինձ:

«Քսան տարի մենք ախպոր պես լինեցք ու հիմա եսպես իրարից խռով», - ասացի ինքս ինձ ու իմ գործ ու զորականից գաղտնի ելա գնացի Սմբատ Բեկի մոտ:

Սմբատ Բեկը ինձ Սմբատ փաշա էր ասում: Նա իր ապարանքը տվել էր Անդրանիկին, իսկ ինքը տեղավորվել էր փայտաշեն տանը, ծառերի տակ:

- Սմբատ Բեկ, - ասացի, - ես ու Անդրանիկ փաշան խռով ենք իրարից: Նախիջեանի կռվին ես հարկադրական նահանջ տվի ու հիմա ամաչում եմ նրա աչքին երեսալ: Երեկ Քաջարանում ես նրան բարեւ տվի՝ բարեւս չառավ: Յաջողագրու, որ հաշտվեցք:

Սմբատ Բեկը առավոտ վաղ ելավ, գնաց Անդրանիկի մոտ: Պառավ մայր ուներ՝ նրան էլ իր հետ տարավ:

Փաշան սուրը կապած գնում-գալիս էր սրահի մեջ: Դուռը ծեծեց.

- Սուսե՞ք, - ասաց փաշան:

Սմբատ Բեկն ու իր մայրը ներս մտան:

- Յա, - ասաց փաշան, - դու եկել ես, իսկ իմ քրոջն ինչո՞ւ ես բերել:

Մայրն ասաց.

- Փաշա, ես եկել եմ խնդրելու, որ թույլ տաս Սմբատ փաշան գա քեզ մոտ:


- Քո ասածը կատարված է, դու ազատ ես, գնա, - ասաց Շապինանդը:

Սմբատ Բեկի մայրը դուրս գնաց: Մնացին Սմբատ Բեկն ու Անդրանիկ փաշան:

- Գնամ բերե՞մ:

- Գնա՛, - ասաց փաշան:

Սմբատ Բեկն եկավ ինձ տարավ Անդրանիկ փաշայի մոտ: Յեծա ճիրոյի ձին ու գնացի:



Խաչիկ Գաշարյան

Քսան քայլի վրա ձիուց իջա եւ մոտենալով համբուրեցի փաշի ձեռքը: Նա էլ իմ ճակատն համբուրեց:

- Դու Նախիջեանի կռվին ինչո՞ւ նահանջ տվիր: Չէ՞ որ ես քեզ հրամայեցի նահանջ չտաս:

- Փաշա, - ասացի, - քո մարմինը պողպատից է, իսկ ինձ՝ մսից, ինչպե՞ս դիմանայի:

Յաշտվեցինք, մնաս բարով ասինք Սմբատ Բեկին ու Պղնձե քաղաքից ճամփա ելանք դեպի Գորիս:

Կապան-Գորիս խճուղին փակ էր, ուստի գնացինք Առաջածոր-Տաթև դժվարին ճանապարհով: Կեանքներով բարձրացանք լեռան գագաթ: Իջանք մի ուրիշ ձոր ու նորից բարձրացանք: Նորից իջանք: Նորից վերելք: Վերին խոտանա գյուղը մնաց մեր թիկունքում: Ձորքի ետեւից հազարավոր գաղթականներ են շարժվում, բոլորն էլ հոգնած, փոշոտված, անթոփ, սեւացած: Շատ ձիեր մնացին ու բեռներ թափվեցին ճանապարհին:

Վերջապես մութով հասանք Տաթև:

Վանքը նստած էր վիթխարի ժայռերի կատարին: Առաջը Որոտանի կիրճն էր, իսկ ետեւը ձյունապատ լեռներ: Վանքի բակում մի ճոճնոլ թարսայուն կար՝ գլխին խաչքանդակ: Շապինանդը ձեռքով հրեց այն: Սյունը խորհրդավոր շարժվեց: Վերջին փորձողը թորգոնը եղավ՝ դարձյալ ճոճվեց:

- Մենք նման ենք այս քարե սյունին: Թեթեւ հպումից շարժվում ենք խորհրդավոր, բայց կանգուն ենք բոլոր փոթորիկների ու դարերի մեջ, - ասաց Անդրանիկը եւ կարգադրեց վաշտապետներին գործին դադարի հրաման տալ:

Գիշերը Տաթև մնացինք:

Յետեյակ օրը՝ օգոստոսի 3-ին, ելանք ճամփա: Մեր առաջ անտակ ձոր է, սրունքին՝ Տաթևի մեծ անապատը, իսկ տակը՝ Սատանի կանուրջը: Մեկիկ-մեկիկ իջնում ենք ձորի կողերով: Ձիավոր մի կին մեր աջակողմյան ժայռ ու մատուռի միջով վերեւից շարժվում է դեպի մենաստան-անապատը: Սուսե մայրիկն է իր զինվոր Ղարաբի հետ: Ետեւից մի խումբ գաղթականներ են գնում: Նրանց մեջ է բռնաշենցի Ծաղիկ Յամբարձունը, տավրորիկցի Ֆադեմ իր թաղիքն ու բախը շալակին, եւ դիւլ գրկած շինականը, եւ մի չարքաշ բարձկան, որի տերը սպանվել էր Սեյդավարի կռվում: Բարձկանը բնագործն էր գալիս էր գաղթականների հետ: Բեռը թեթեւ էր այլևս: Սեւի մի լեռնանցքում ընկել էր ճրագվառոցը, ընկել էր ուրազը, հավի թառը չկար: Մի փայտե շերեփ, դռն սողնակ եւ հարսանեկան բարձ թափվել էին դեպի Տաթև վերելքի ժամանակ: Տավրորիկցի Ֆադեմ մի քանակած առու էր շտկում դեպի

մենաստան տանող ճանապարհին, երբ մի ծանր բան իր ոտքերին գարկվելով գլորվեց անդունդ: Աստվածամոր նկարն էր երկար թարթիչներով: Յետո մի արծաթե բուրվառ ընկավ:

- Բան չկա, գաղթի ճամփա է, դրախտի ճամփա չէ, ամեն բան կպատահի, - հուսադրեց Ծաղիկ Յամբարձունը, առանց ընթացքը դադարեցնելու:

Կիրճի հատակին, Որոտանի մի ափից մյուսը, մի հսկա քարաժայռ էր ձգված: Սատանի կանուրջն էր: Անցանք վրայով եւ բռնեցինք դիմացի գաղթափորը: Մեր աջ թեւի վրա Յալիձորն էր, գլխին՝ անդունդ: Ձորքի մի մասը հասել էր Շինուհայր գյուղի «Յոթ աղբյուր» սարը, մյուս ծայրը չոքած էր Որոտան գետին, իսկ գաղթականների բազմության վերջին շարանը դեռ գալարվում էր վանքի ճոճնոլ սյունի շուրջ:

Այնտեղ է նաեւ Սուսե Իմոն: Տաթևի քարափին կանգնած նայում է ձորն ի վար տեսնելու, թե մինչեւ ուր գլորվեց աստվածամայրը երկար թարթիչներով, կամ ուր հասավ Սուսե մայրիկի ձին:

Յաշտվել ենք ես ու Շապինանդը, գնում ենք կողք կողքի: Մեր ետեւից գաղթականությունն է գալիս, դրոշակի ետեւից գործը, գործի ետեւից՝ գունակը եւ հետնապահ զինվորներ:

Չոգնած է մեր գործը: Քչերը կոշիկ ունեն: Շատերը ծակ տրեխներով են, առանց գուլպաների: Սպաներից մի քանիսը նույնպես տրեխ են հագել: Իսկ գլխարկները բազմաձև են, տարբեր: Մեկ-երկու զինվոր գեղեցիկ հետ ջուրակ եւ սրինգ են կրում: Ձեռք, ջուրակ եւ սրինգ կողքկողքի. իսկապես, որքա՞ն տարօրինակ գորաբանակ է: Արեւմտյան Յայաաստանի հեռավոր լեռներից այդ գործը հասել է մինչեւ Որոտանի կիրճը: Կիրճով Որոտանն է հոսում, իսկ լեռների վրայով՝ ինքը: Մեկը ռոզգուն է հայոց հողը, իսկ մյուսը՝ հայության ոգին:

Բազում կռիվներից ու դժվարին երթից խոցոտված, պատառոտված, մաշված է նաեւ զորամասի դրոշակը: Շինուհայրը մնաց Որոտանի կիրճում, իսկ ձայն թեւի վրա՝ երեք մեծ բլուրներ: Գնալով եռաբլուրները հեռացան, թիկունքում մնաց նրանց կանաչ հարթությունը եւ հանկարծ մեր առաջ, խոր ձորի մեջ, երեսաց մի սպիտակ քաղաք:

### Քարե մուր

Գորիսը ցնծությամբ դիմավորեց Անդրանիկին:

Ձորքը տեղավորվեց մոտակա Վերիշեն, Տեղ եւ Խնձորեսկ գյուղերում, իսկ գաղթականությունը՝ քաղաքի այգիներում, տներում եւ գետափի կենդանակերպ քարաբուրգերի շուրջ, ժայռափոր այրերի մեջ:

Բայց Գորիսի շրջանը ցորենից սակավ էր: Սիսիանում զով էր եւ ցորենն ու խոտը առատ: Ելանք Գորիսից եւ շարժվեցինք դեպի Անգեղակոթ:

Ձորքի համար մի փոքրիկ հոտ է կազմված: Ուր գնում ենք, այդ հոտը արածելով գալիս է մեր ետեւից: Յոտի մեջ է նաեւ անհայտ գաղթականի բարձկանը:

Յազիվ էր Անդրանիկը Անգեղակոթ մտել, երբ մի գյուղացի վրդովված ցզվեց նրա առաջ.

- Փաշա, գանգատ ունեն: Մի աչքդ ցցիր իմ տանիքին: - Ես գյուղում հազար տանիք կա, ես ո՞ր տանիքին նայեմ, - ասաց գորավարը: - Էն, որ նոր քաղած առվույտ կա վրան եւ մի զինվոր առվույտս քանդելով թափում է ցած: Ի՞նչ իրավունքով:

Անդրանիկը դուրբինը դրեց աչքին: Նայեց տեսավ՝ Ախոն էր: Եղանը ձեռքին բարձր կանգնած

քանդում էր գյուղացու կանաչ դեզը: Քանդում ու թափում էր ցած: Ամեն հարվածին եղանի պոչը ցնցվելով դիպչում էր ժամատան գանգակին՝ մի թեթեւ ծլնագոց արծակելով:

Սառը քրտինք եկավ վրան: Նա երբեք Ախոյին այդպես չէր տեսել: Մի՞թե Ախոն է: Նորից նայեց: Չէ, Ախոն էր: Մինչեւ այդ դեռ ոչ մի զինվոր չէր արատավորել իր գործի պատիվը այդքան գրգռիչ արարքով:

Սեյդավարի կռվից հետո Ախոն սասուցոց պոչից անջատվելով հետնապահ էր դարձել մեր գորամասին եւ գունակի ետեւից էր գալիս: Գաղթականների հետ հնձում էր սիսիանցոց կղծած արտերը, օգնում բերքահավաքի աշխատանքներին: Իսկ այսօր ի՞նչ է պատահել այդ տարօրինակ զինվորին:

Անդրանիկը եկավ կանգնեց անգեղակոթոցու տան առաջ: Ախոյի աչքը դիպավ գորավարի աչքին:

- Մեր ձիերի համար է, փաշա:

- Ո՞ր ձիերի:

- Սասուցոց պոչից:

Սասուցունցներն էլ կանչեց.

- Ես գյուղացին գանգատ ունի քո դեմ ու իր գանգատ արդար է, - խոսեց փաշան ու մի շառաչուն աստակ տվեց Ախոյին:

Ախոյի կարճ, մոխրագույն փափախը գլորվեց վար:

- Փաշա, պատիվդ քեզ պահիր,

- գոռաց Ախոն ու ձեռքը մատուցեցին գցեց:

Շապինգ գարահիսարցիները սրերը քաշեցին: Փեթաբա Մանուկն ասաց. «Էղ ի՞նչ խոսք է, Ախո», - ու սասուցունց ոտներով նետեց մի կողմ:

- Քո մարդը ճանաչիր, - գոչեց Ախոն վեր կենալով եւ փափախը ծածկելով վագրի կատաղությամբ նետվեց դեպի գորավարը:

Մանուկը թևը բռնեց:

- Դեռ քո ծուխունը չէ՞ս թողել,

- ասաց Անդրանիկը: - Կամ մոռացել ես, թե մեր այսքան տարիների պայքարն ու տանջանքը ինչի համար է:

Ախոն լռեց:

Սասուցին հավաքեց թափած առվույտը, իր ձեռքով դիզեց անգեղակոթոցու տանիքին ու ցած իջավ: Տեսավ գորավարը նստել է գյուղացու շենքին եւ հազիվ լսելի ձայնով ինչ-որ տխուր եղանակ է շվացնում:

- Պոճա՞ր, Ախո:

- Պոճա, փաշա:

- Դե, հիմա երթանք:

Գյուղի ծայրին մի ծերունի հաց էր կալում: Ծերունուն իջեցրեց, ինքը թռավ կանին: Չորրորդ պտույտի վրա թիկնապահները կանգնեցին մի գաղթական զինվորի: Լեռնցի էր, բեղերը թանձր ու ոլորուն:

- Անթուան փաշան ո՞ր է:

- Կամ է՞ քում:

- Ինձ փաշի մոտ տարեք:

- Փաշա, մագոտ աբայով մի զինվոր է ուզում քեզ տեսնել, - զեկուցեց հիսնապետ թորգոնը:

- Սասուցի Օհանն է, թողեք, թող քովս գա: Ձորավարը իջավ կամից:

Օհանը նրա առաջը կտրեց:

- Տխուր ես, Օհան, ի՞նչ կա:

- Փաշա, իմ ախպեր Մորուքը ծանր հիվանդ է: Մի ոչխար տուր տանեմ Մորուքի համար:

Անդրանիկը Սասունում երեք տարի ապրել էր Օհանի տանը:

Յիշեց Մուրոյի տան աղ ու հացը եւ հովիվներից մեկին կանչելով՝ կարգադրեց գորամասի խաշներից մի ոչխար տալ Օհանին:

- Ի՞նչ թե ձեր ընտրությամբ, այլ այս սասուցին ո՞ր ոչխարի վրա ձեռքը դրեց՝ այն էլ կտաք:

Օհանն առավ ոչխարն ու գնաց:

Շուտով Մորուքը Կարոն ոտքի ելավ եւ գործը Անգեղակոթից շարժվեց դեպի Բռնակոթ: Այստեղ մերկ զինվորներին հագուստ տրվեց:

Բռնակոթից անցանք Որո-

տնավանք:

Գեղեցիկ է Շաքիի ջրվեժը:



# Գեղարվեստական գրականություն



Առջեւի շարքում՝ ձախից՝ Միշա, Եղիշե Քաջունի, Տիգրան Սազանդարյան: Կենտրոնում՝ Նսրաբ Սարգսյան, ձախից՝ Միքայել Պարոնյան (Գորիս), գոր. Անդրանիկ, գլխավոր Սարգսյան Սարգսյանյան, կանգնած են ձախից՝ Արշակ Շիրինյան (Գորիս), 2-րդը՝ Յովակ Սարգսյանյան, 3-րդը՝ Կոմիտաս Զաքար, 4-րդը՝ Բախշի բեկ, 5-րդը՝ բժիշկ Ռուբեն Տեր-Սարգսյանյան, աջից 2-րդը՝ Նիկոլայ Յովսեփյան (Օսիպով), 3-րդը՝ Բաղդաս Մելիք-Յուսեփյան, 4-րդը՝ բանտարար Գեորգ:

Անդրանիկը թիկնեց մի ժայռի եւ փափախը ծախս ոտքին կտորած՝ ընկավ մտքերի մեջ: Բոլորս կախարհված էինք հրաշք տեսարանով: Ինչ անեի զեղեցկություն է: Ինչպիսի միասնական որոտալի ընթացք: Նրա թնդույնը ինձ հիշեցրեց Գուրգուզան, որի գոռոցը խոզով սարի տակից մինչեւ Սասուն էր հասնում:

- Ա՛, եթե մեր ժողովուրդը այդպիսի միասնական թափ ունենար:

Հետեւյալ օրը մենք մտանք Որոտնապոլսի եւ սեպտեմբերի 10-ին վերադարձանք Գորիս: Այդտեղ էր հասել նաեւ սասունցիների գունդը: Գորիսում նստեցինք երկար: Անդրանիկը կանչեց տեղի ազգային խորհրդի մարդկանց եւ կարգադրեց գործադարձ քառանկի սայլերը նորոգել:

- Ե՛րբ պատրաստ կլինի, - հարցրեց:

- Մի շաբաթից, - պատասխանեցին խորհրդի անդամները:

- Չեզ երկու շաբաթ ժամանակ: Անցավ երկու շաբաթ, բայց սայլերը չնորոգվեցին:

Ձայտացավ Անդրանիկը եւ զգաց, որ ազգային խորհրդի իր դեմ հակառակ ընթացք է բռնել: Եղանակը աշուն էր եւ արդեն ցուրտ էր իջնում ձորերը:

Անդրանիկը կանչեց ինձ՝ ասաց. - Ստիպված ենք եւ ձմեռը Գորիսում մնալ: Քո կարծիքն ի՞նչ է:

- Սա քարե մուր է, - ասացի: - Եւ մուրը մեզ չի կարող պահել: Ձմեռը դժվար կլինի գործի եւ ձիերի համար: Մարդիկ չեն ուզում նույնիսկ քո սայլերը նորոգեն:

Նա հա ասելով, ես՝ չէ, ելանք նորից եկանք Անգեղակոթ:

Անգեղակոթում պառակտում ընկավ մեր մեջ: Սարգիս ճեպեցին եւ երրորդ գունդարտակի հրամանատար Բոնապարտը իրենց երկու հարյուր ծախարհներին անտեղ արձակեց: Մյուս օրը իրենց հարյուր ծախարհները զուտ զուտ արձակեց: Մյուս օրը իրենց հարյուր ծախարհները զուտ զուտ արձակեց: Մյուս օրը իրենց հարյուր ծախարհները զուտ զուտ արձակեց:

Այսինքն մի մասը տեղավորվեց Միսիանի գյուղերում, ուր հացը թեւ ցամաք, սակայն առատ էր, իսկ մի

զգալի մասը սասունցիների գնդի հետ մեկնեց Վայոց ձոր:

Անդրանիկը դարձավ ինձ:

- Ի՞նչ ես չվար կանգնել: Քո միտքը նույնպես ինձնից բաժանվելն էր:

- Բայց մենք Պղնձե քաղաքում հաշտվեցինք:

- Հաշտվողներն էլ կարող են բաժանվել: Չեր նպատակն է հեռանալ Ձանգեզուրի սահմաններից եւ գործադարձ ցրել: Շաքիի ջրվեժը, որ մենք տեսանք, համարի, որ չենք տեսել: Ավստ՝ս Հայկ Նահապետի ազգին:

Մեր գործը ճեղքվեց:

Մշեցի եւ խնուսցի զինվորները, ինչպես նաեւ գործադարձ հարյուրապետների մեծ մասը մնացին ինձ հետ, իսկ Անդրանիկի հետ մնաց միայն առանձին հարվածող գործադարձ մնացյալ ամբողջ գործը՝ թվով հազար երեք հարյուր զինվոր, գլխավորապես Շապինգարահիսարի, Կարինի, Խարբերդի, Խոտորջուրի եւ Կամախի հեծյալն ու հետեւակը:

Շապինգարահիսարը իր գործադարձ մնաց Ձանգեզուր, իսկ ես իմ ծիավոր վաշտերն առած եկա Վայոց ձոր եւ Սելիմի լեռնանցքով բարձրացա դեպի Սեւանի արեւելյան ափերը:

### Վախ, իմ Ասլանս կորավ

Մշեցի հին հայրուկներից Գորիսում շատ քիչ մարդ մնաց: Դրանցից մեկը գունակի պետ Հաջի Գեւորն էր: Ձորավարի բարկության, վշտի կամ ուրախության պահերին սպայակույտի միակ անդամը, որ համարձակվում էր նրան մոտենալ՝ Հաջին էր: Ձվարթախոս, կենսախիտ մարդ էր Հաջին, բոլոր զինվորների ու սպաների սիրելին: Տարիքով ծեր էր, ոտքից էլ թեթեւ կաղում էր, բայց բնավորությամբ ու խառնվածքով երիտասարդ էր: Ելնում էր միշտ առավոտ շատ վաղ, երբ ամենքը քնած էին, եւ չերթեզկան հագին, բուրդ կապած, երկաթակոթ ծխամորձը ձեռքին, շվշվացնելով անցնում էր Գորիսի փողոցներով: Սովորություն ուներ կանգնել Շապինգարահի լուսամտի տակ եւ բարձրաձայն սուլել իր հայրուկային հին երգը, որի ամեն երկու-երեք բառերից մեկը «լուր» էր:

Այդ առաջին գիշերն էր, որ Անդրանիկը հոգնած քուն էր մտել քարե մուրում, Մախլուտոյի

եւ իր ծիավոր գործի մեծ մասի բացակայությամբ:

Առավոտ կանուխ իր պատուհանի տակով անցավ Հաջի Գեւորն, բարձրաձայն լուր կանչելով: Շապինգարահիսարում բաց արավ լուսամուտը եւ հրամայեց նրան ետ դառնալ:

Հաջին մոտեցավ:

- Լսիր, դու քո՞ւրդ ես, թե՞ հայ:

- Հայ եմ, գորավար, եւ այն էլ մանազկերտցի:

- Դու երեւի մանազկերտցի քրդերից ես: Ի՞նչ ես ամեն առավոտ լուսամուտիս տակ լուր կանչում: Շաքային հասարակ զինվոր էիր. ես քեզ սպա դարձրի, հետո էլ կարգեցի գործադարձ գունակի պետ, որ իմ եւ գործի քո՞ւրդ խանգարես քո լուրներով:

- Հայրուկ եմ եղել, գորավար, եւ այդ երգը միշտ իմ շուրթերին է:

- Հայրուկ ես եղել: Իսկ մենք քո կարծիքով երկնքի՞ց ենք ընկել: Վարժվիր զինվորական կարգ ու կանոնի: Չերթեզկա եւ համակարձ՝ լուր: Հիմա լսիր իմ հրամանը: Մեր քառանկի սայլերը արագ նորոգվում են. ազգային խորհրդի տղաներին զգուշացրու, որ վաղը վերջին օրն է: Սարգիս ճեպեցին էր մեր ծիանը պայտում: Նա հիմա չկա: Գորիսում կամ գաղթականների մեջ շտապ մեկ-երկու պայտառ գտիր, որ գործադարձ ծիերը պայտեն: Աղբյուր Սոսն երկու օր առաջ զանգառվեց, որ իր ծիու պայտերից մեկը մնացել է Որոտանի կիրճում: Հիմա պետ թորոգմի ծիու պայտն էլ ընկած է: Ստուգիր եւ երկուսի ծիերն էլ պայտել տուր: Մի խոսքով, քո լուրները պակասեցրու եւ մալերը շատացրու: Կարգադրել էի, որ քաղաքում մնացած գաղթականներին պարեն բաժանեն: Իմացիր, բաժանեցի՞ն, թե ոչ: Երազվառոցին կգաս զեկուցելու:

- Լսում եմ, գորավար:

- Դե, հիմա գնա:

Հաջի Գեւորն ամբողջ օրը զբաղվեց գորավարի հրամանը կատարելով: Երեկոյան, երբ շվշվացնելով վերադառնում էր սպայակույտի կենտրոնատեղին, արձանացած կանգ առավ մի տեսարանի առջ:

Մի աշտույժ խութեցի գետափի կուրծած գերաններից գաղթականների մի խումբ շուրջը ժողոված, ոգելորությամբ հեքիաթ էր պատմում. «Սեբաստացի Մուրադ Սարիզամիշեն անգե՛ն

կիսանի Թիֆլիս քաղաք: Գեներալ Նազարկեթով նրան կկանչե իր քով, կասե. «Մուրադ, մենք օսման թուրքի հետ խալ ու խարզ ենք հիմա: Մեր մեջ կռիվ վերջացած է: Դու կուգես, որ քո եւ Անդրանիկի պատճառով մեր մեջ նորից կռիվ էղնի: Շուտ առ քո սեւ յափնջին, առ քո սպիտակ ծիւն ու հեռացիր էստեղից»: Մուրադ կառնի իր սեւ յափնջին, կիեծնի իր սպիտակ ծիւն, ինքն էլ քաջ սիրուն տղամարդ կեղնի, կերթա Յուսիսային Կովկաս: Իր ետեւից նորից հեռագիր կգա, թե ավելի հեռու գնա: Մուրադ կերթա կիսանի Հաշտարխան:

Կլսե, որ էլ կողմերը մի կարմիր հրամանատար կա, անուր՝ Վորոշիլով: Չին կքշե կերթա էլի հրամանատարի քով: Բարեւ կիտա, բարեւ կանոնե ու կարմիր հրամանատարին կասե. «Դուք Լեւին փաշի հետ գործ ու զենք եք վերցրե ազատ կյանքի համար: Մենք լեռնաչափ մարդիկ ենք ու մեր կռիվ աշխարհի բեկերի ու գոռաբների դեմ է, էլ կարելի՞ է տարակուսել, որ ձեզ հետ ենք»: Վորոշիլով կասե. «Որ էդքան քաջ մարդ ես ու մեր գործին համակիր, մեր ընկեր Ստեփանոս Շահունյան Բաքվի մեջ մեղ տեղ է ընկած: Ել գնա Բաքվի ճակատ»: - Չենք տուր էրթամ:

Վորոշիլով իրեն զենք կտա: Ու Մուրադ նույն օր, ծին տակ, հրացան թեւին, կանցնի Բաքվի ճակատ ու կկանգնի Ստեփանոս Շահունյանի կողքին:

Ենի թող էնտեղ մնա, մենք ջուղաք տանք Անդրանիկից:

Անդրանիկ, որ կիսանի Աբրակունիս, կնստե նամակ կգրե Ստեփանոս Շահունյանին: Նամակի մեջ կգրե. «Ես, դարբնի տղա Շապինգար, Գորգան գավառ եւ Նախիջեւանի գավառ, եւ Սեդրի գավառ կարմիր դրոշակի տակ առա»: Գիշերով կերթա Կղնուք ու իր նամակ անթել հեռագրով կքաշե Բաքու:

Շահունյան Ստեփանոս կվերու Անդրանիկի անթել հեռագիր ու կքշե Լեւինի քով. թե հալ ու հալբաթ էսպես բան, գորավար Անդրանիկ իր գործով մեր կողմ անցավ:

Լեւինի կիարցու. - Անդրանիկ ո՞ւմ տղեն է:

- Դարբնի տղա է, - կպատասխանի Շահունյան Ստեփանոս:

- Բարեւ արա Անդրանիկ փաշին, - կասե Լեւին: Ու շատ կուրախանա, որ դարբնի տղա Անդրանիկ Նախիջեւանի վրա կարմիր դրոշակ է քաշել:

Շահունյան Ստեփանոս կնստի ու նամակ կգրե Անդրանիկ փաշին, թե քո ընկեր սեբաստացի Մուրադ արդեն Բաքու է հասե, դու ինչո՞ւ ես նստե Աբրակունիս, շուտ վեր կաց արի: Ու էն ժամանակ, որ Շապինգար կկարդա Ստեփանոսի նամակ եւ Լեւինի բարեւներ եւ կուգե ծի նստել, որ իր գործը առնի Բաքու էրթա, կտեսնի իր ծին չկա:

- Իմ ծին գողցան, - կգոռա փաշան:

Հարյուրապետ ճեպեցի Սարգիս եւ հիսնապետ թորոգմ բժիշկ Բոնապարտի հետ վազելով կիզան:

- Իմ ծին ո՞ւր է, - կիարցու փաշան:

- Չգիտեմք, քու ծիապանին հարցու: - Եստեղ փաշան կիերտուի: Մի չափալախ կիտա ճեպեցի Սարգիս, մի չափալախ կիտա հիսնապետ թորոգմին, իսկ բժիշկ Բոնապարտը լեղապատառ կփախչի:

Կկանչե Հաջի Գեւորին:

- Իմ ծին ո՞ւր է, - կիարցու փաշան: Ազուլիսից վերեւ ծորի մեջ մի հին վանք կա: Հաջին կհիշե, որ Սեյդավարի կռվից հետո գորավարն Ասլանին ուղարկել էր էլ վանքին պահելու:

- Քու ծին տվել ես վանքին պահելու, - կպատասխանե Հաջին:

- Շուտ մարդ ուղարկե թող բերի: Ես էլ ծինով Բաքու՝ Ստեփանոս

Շահունյանի հավարին պիտի էրթան:

Հաջի Գեւորն մարդ կուղարկե վանք, բայց դատարկ ետ կգա:

- Հեյ վա՛խ, - կասե փաշան, - մեր վանքերն էլ անտուր դարձան: - Ու մի չափալախ կիտա Հաջի Գեւորին: Հաջի Գեւորն ցավից երկու ականջ կբռնե ու կգոռա: Էդ գոռոցի վրա ներս կմտնե Սմբատ փաշան:

- Իմ ծին ո՞ւր է, - կիարցու փաշան ու մի չափալախ կիտա Սմբատ փաշին: Դեռ մինչեւ էր օր Անդրանիկ փաշան Սմբատ փաշի վրա ձեռք բարձրացրած չկար, էնքան որ կսիրեր էնոր:

Սմբատ փաշեն կասե. «Եկեք էրթանք էլ խեղճուկի ծին գտնենք, թե չէ մենք դրա ձեռքից արձնող չենք»: Ճեպեցի Սարգիսն ուղարկեց Գորգան գավառի Վերին Ազուլիս ու Յղնա, հիսնապետ թորոգմին՝ Սեյդավար: Հաջի Գեւորն ականջը բռնած շվշվացնելով կերթա Նախիջեւանի սարերը: Իսկ ինքը մի քանի սասունցի ծուռ հարյուրկ իր հետ առած՝ Մորուք Կարո, Չոլո եւ Արծիվ Պետո, մինչեւ Ջուլֆա կիսանի: Շատ ման կգան, չեն գտնի: Ճարահատյալ ետ կգան:

- Վախ, իմ Ասլանս կորավ, - կգոռա Անդրանիկ փաշան ու բարկությունից ամեն մեկին նորից մի չափալախ կտա: Ամենամեծ չափալախ էլի բաժին կընկնի Հաջի Գեւորի ականջակոթին:

- Ես լսել էի, որ գաղթականների մեջ բռնաշենցի մի հիանալի հեքիաթ պատմող կա, բայց տեսած չկայի, - ասաց Հաջի Գեւորն գերանների վրա նստած մարդկանց մոտենալով: - Անուրձի ի՞նչ է:

- Իմ անուրձի Ծաղիկ Համբարձում է: Էդ հեքիաթ պատմողը ես եմ:

- Քանի՞ տարի է, որ հեքիաթ ես պատմում:

- Հա՛ կպատմեն: Վերջին ասացողի ձեռքից կառնեմ, մեկ երկու նախշ կդնեմ վրեն ու կտամ ինձնից հետո եկողին: Իմ հեքիաթին վերջ չկա:

- Հիանալի պատմություն է: Բայց մի բան ասեմ, Համբարձում եղբայր, դեռ մինչեւ էսօր Անդրանիկ փաշան ինձ ապտակ տված չկա:

- Ինչի դու ո՞վ ես:

- Ես Հաջի Գեւորն եմ:

- Հեքիաթի մեջ կիտա, դու խաբար չես էղնի: Ուրեմն Հաջի Գեւորն դո՞ւ ես: Ես քու լուրն լսել եմ, բայց քեզ տեսած չկայի: Հեքիաթն էլ իմ լուրն է, պարոն Հաջի: Դու քո լուրն առավոտ կշվացնես, ես՝ իրիկվան, - ասաց բռնաշենցին բեղի ծայրը մատի վրա բարակ ուրդերով: - Ասում ես, փաշան քեզ ապտակ տված չկա: Ինչո՞ւ, Փեթարա Ախոն քեզնից պակաս՞ տղամարդ էր, որ նրան ապտակ տվեց: Էդ էլ հո հեքիաթ չէ: Ախոն ի՞նչ իրավունք ուներ խեղճ անգեղակոթցու առվույտը տանիքից ցած թափել: Կամ Սմբատ փաշա՞ն էր պակաս տղամարդ, որ նախաձեռնե փաշան արժանացավ Շապինգարի ապտակին: Էդ բոլորը փաշան արել է Հայաստանի պատվի համար, իմ ու քու պատվի համար: Բանի որ խոքը տեղն էկավ, մի կարճ բան պատմեմ, մինչեւ Անդրանիկի ծին գտնենք: - Խութեցի Սալիմ աղեն իր քուրդը տարավ դրեց ճամփի մեջտեղ: Շաքիի իշեց տեսավ ճամփի վրա իր դուշմանի քուրդն է դրված: Կարծելով թե Սալիմն սպանվել է, նշան բռնեց նրա քուրդին:

- Դու իմ քուրդին զարկեցիր, ուրեմն ինձ զարկեցիր, - բռնաց Սալիմ աղեն ու զարկեց սպանեց իր քուրդի վրա նշան բռնողին: Հիմա դու իմ հարցին պատասխան տուր, պարոն Հաջի, մեր ազգության պատվի մի քուրդի չա՞փ էլ չկա, որ Անդրանիկ փաշեն նրա վրա նշան բռնողին անպատիժ թողնի, կամ նրա տանիքի բարոցը քանդողին մի ապտակ չտա:

Ակնարկ

# 5000-ամյա Բռնակործ



**ՀԵՆՋԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ**  
Սիսիան, պատմաբան

**Բռնակործ ոչ միայն Սյունիքի, այլև հանրապետության ամենախոշոր ու ամենաշատամարտական բնակավայրերից մեկն է, որը պարունակում է անմահ հուշարձաններ, որոնք հիմնականում տեսակետ են պարզապես ժողովրդական ստուգաբանությունն է: Առավել ընդունելի է հետևյալ տեսակետը: «Կոր» նշանակում է շեն, գյուղ, բնակավայր, «Բռն» բռն, ասի: Այսինքն գյուղ, շեն, բնակավայր ասի մեջ: Դարերի ընթացքում օգտագործվել են գյուղի անվան մի շարք տարբերակներ: Բռնակոր, Բռնակոտ, Փռնակոր: Ըստ Բռնակորի ծխական մատյանի՝ 1848 թվականին գյուղը ունեցել է 91 գերդաստան և 742 բնակիչ: Ներկայումս ունի 775 տնտեսություն, 2254 շունչ:**

## ԳՅՈՒԴԻ ԱՆՎԱՆ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գյուղի անվան ծագումնաբանության շուրջ տարբեր կարծիքներ կան: Ոմանք կարծում են, որ անունն առաջացել է եկվոր ինչ-որ բռնեցիների և կորեցիների անվանումներից: Դա չի հիմնավորված տեսակետ են պարզապես ժողովրդական ստուգաբանությունն է: Առավել ընդունելի է հետևյալ տեսակետը: «Կոր» նշանակում է շեն, գյուղ, բնակավայր, «Բռն» բռն, ասի: Այսինքն գյուղ, շեն, բնակավայր ասի մեջ: Դարերի ընթացքում օգտագործվել են գյուղի անվան մի շարք տարբերակներ: Բռնակոր, Բռնակոտ, Փռնակոր: Ըստ Բռնակորի ծխական մատյանի՝ 1848 թվականին գյուղը ունեցել է 91 գերդաստան և 742 բնակիչ: Ներկայումս ունի 775 տնտեսություն, 2254 շունչ:

## ՈՐՏԵՂԻՅ ԵՆ ԱՆՎՈՒՄ ԱՐՄԱՆՆԵՐԸ

Եղած սկզբնաղբյուրները վկայում են, որ գյուղը տասնյակ հարյուրավոր տարիների պատմություն ունի: Շուրջ հազար հինգ հարյուր տարի առաջ Բռնակորի խոշոր ավան լինելու վկայագիրը նշանավոր պատմաբան, մեր հայրենակից Սորոս Գաբրիելյանը համարում է 5-6-րդ դարերում կառուցված խոշոր բազիլիկ եկեղեցին, որը սկզբնական շրջանում եղել է հեթանոսական մեհյան: Իսկ ըստ Հայկ խաչատրյանի՝ Բռնակորը Բաբելոնի հասակակիցն է՝ հինգ հազար տարեկան: Առաջին գրավոր հիշատակությունը Բռնակորի մասին 13-րդ դարում թողել է Ստեփանոս Օրբելյանը: Գյուղը մտել է Մեծ Հայքի բազմավորության 15 աշխարհներից առաջինի՝ Սյունիքի Ծղուկ գավառի, իսկ 428 թվականին՝ հայոց թագավորության անկումից հետո, Սյունիքի հետ միասին՝ մարզպանական Հայաստանի կազմի մեջ: Մարզպանության ներքին վարչատարածքային կառուցվածքում Ծղուկը մտնում է որպես գավառ: Այնուհետև, դիմակայելով մեկը մյուսին փոխարինելու եկած օտար բռնակալների ասպատակություններին, գյուղը իր ինքնությունը կարողացել է պահպանել և 17-րդ դարի 40-ական թվականներին մտել է պարսկական Շուշի խանության

Սիսիանի մեկիություն կազմի մեջ:

## ՍԻՍԻԱՆԻ ՄԵԼԻՔՈՒԹՅԱՆ ՕՐՐԱՆԸ

Սիսիանի մեկիությունը, որը գոյատևել է շուրջ 200 տարի, դեկավարել է բռնակորյան երկու նշանավոր տոհմ՝ սկզբում Մելիք-Սաֆնազյանները, այնուհետև՝ Մելիք-Թանգյանները: Թեև մեկիքանիստ գյուղը սկզբում Անգեղակոթն էր, սակայն 18-րդ դարի երկրորդ կեսից այն փոխադրվում է Բռնակոր: Սաֆնազյան տոհմից նշանավոր էր Մելիք Սաֆնազ Երկրորդը, ում անմիջական օժանդակությամբ 1699 թվականին Իսրայել Օրու գլխավորությամբ տեղի ունեցավ Անգեղակոթի նշանավոր գաղտնի ժողովը, ուր դրվեցին հայ ժողովրդի անկախության պայքարի առարկայական հիմքերը:

Մեծ համբավ է հռչակվել վայելել Մելիք Թանգյան մելիքական տան Մելիք Թանգի Կարապետի Մելիք-Կարապետյանը Մելիք Թանգի Երկրորդը: Ծնվել է 1791 թվականին և մելիքի տիտղոս կրել 31 տարեկան հասակից: Իր իշխանության չորրորդ տարում՝ 1826 թվականին, սկսվեց ռուս-պարսկական երկրորդ պատերազմը, որը եւ ավարտվեց 1828 թվականին: Շարունակելով իր հոր՝ Մելիք-Կարապետի քաղաքականությունը, նա հակվում է դեպի Ռուսաստան և մեծ աջակցություն ցուցաբերում Անդրկովկաս ներխուժած ռուսական զորաբանակներին: Հաշվի առնելով նրա ռազմական շնորհքն ու տաղանդը, շուտով ռուսական կայսրության կողմից ստանում է հազարապետի զինվորական կոչում և նշանակվում ոչ միայն Սիսիանի, այլև ողջ Սյունիքի գորպայտ: Քանի որ թուրքմենչայի պայմանագրով թուլարովել էր նաև պարսկահայերի գաղթը դեպի Արեւելյան Հայաստան, Մելիք-Թանգի 2-րդը, լինելով հեռատես քաղաքական գործիչ, ձեռնամուխ եղավ գաղթականների հաշվին Սիսիանի հայ բնակչությունն ամրացնելու և բազմացնելու կարևոր գործին: Մեծ ջերմեռանդությամբ մելիքը ձեռնարկեց երեք կարևոր միջոցառում ևս: Չմտա բքերի պատճառով փակվում էր Նախիջևանից Սիսիան տանող Սիսիանի լեռնանցքը, եւ առեւտրականները հաճախ մնում էին ցրտի և սառնամանիքի մեջ: Որպես ժամանակավոր կացարան նա Արագլի լեռան վրա կառուցեց մի իջեւանատուն, որի շինարարության համար 1845 թվականին ռուսական կառավարության կողմից պարգևատրվում է Սուրբ Աննայի առաջին աստիճանի շքանշանով: Երկրորդ ձեռնարկումը Անգեղակոթի տակ Նախիջևանից եկող ճանապարհի վրա Փուլի երկթից կամուրջն էր: Ներկայումս պահպանվել են կամուրջի միայն հետքերը: Երրորդ կարևոր խնդիրը ճանապարհների անվտանգության ապահովումն էր, քանի որ քարավանների վրա հարձակումները հաճախակի էին կատարվում: Շուշի-Նախիջևան առեւտրական ճանապարհի վրա շուտով Բռնակորը վերածվում է կարևորագույն հանգույցի: Նրա հաջորդ ձեռնարկումներից 1848 թվականին Բռնակորի եկեղեցու նորոգումն ու զանգակատան կառուցումն էր: Այդ կառույցը նվիրել է իր վաղամեռիկ որդի Դազարի, եղբայր Դուկասի և նրա որդի Կարապետի հիշատակին: Չանգակատան ճակատային մասում փորագրված է. «Ես Սյունյաց հազարապետ Մելիք-Թանգի-Մելիք-Կարապետեան շինեցի գաւիթս եւ կաթողիկէս հիշատակ ի վերս գերեզմանի

միամոր որդի իմոյ աղա Դազարին, եխբար Դուկաս Բեկին, որդի Կարապետ աղին»: ...Տաթևի հետ հաղորդակցությունը կարգավորելու նպատակով նա 1853 թվականին սերունդներին թողեց նաեւ մի հոյակապ կամուրջ: Այն գտնվում է Դավիթ-Բեկի բերդի (Որոտնաբերդի) ստորոտին: Ասում են, թե երբ ավարտել է կամուրջը, մելիքն ասել է, եթե ժայռը չփլվի, կամուրջը չի քանդվի: Նա կարելու է նաև մատաղ սերնդի կրթության գործը: Առատաձեռնորեն օգնել է կրթական հաստատություններին, Տաթևի վարժարանին: Տաթևի վանքին է նվիրել 40 դեսյատին հող:

...Թեև 1840 թվականի ապրիլի 10-ի ռուսական օրենքով մելիքների վարչական եւ դատավարական իրավունքները վերացվել էին, սակայն նա մինչև իր կյանքի վերջ կարողացավ պահպանել իր տիտղոսը: Նա իշխանության է եկել 1822 թվականին եւ փաստացի իշխել մինչև իր կյանքի վերջը՝ 1866 թվականը, շուրջ 44 տարի: Մահացել է 75 տարեկան հասակում: Թաղված է եկեղեցու ներսում: Նրան հաջորդում է եղբայրը՝ Մելիք-Ռուկասը, որովհետև որդին մահացել էր: Ի դեպ, ըստ մեր ձեռքի տակ եղած տվյալների, ունեցել է 2 զավակ՝ մեկ տղա և մեկ աղջիկ: Տղան կարճ է ապրել: Հայրը նրան ուսման է ուղարկել Ազուլիս: Այստեղ էլ մեզ անհայտ պատճառներով նա 1848 թվականին մահացել է: Որդու դին Սիսիան է փոխադրել մելիքի կինը: Բերել է Դաստակերտի սարերով: Նա թաղվել է հենց մելիքի կողմից նոր կառուցված եկեղեցու գավառում, որտեղ հետագայում թաղվել է նաև մելիքը: Տապանքարի վրա գրված է. «Այս է տապան Սյունյաց հազարապետ Մելիք-Թանգու որդի Դազար աղին 1821-1848թթ.»: Շատ հետաքրքիր է ողբերգական ճակատագիր է ունեցել նրա դուստրը՝ Խանումը: Եկեղեցու ճակատային մասում գրված է նաև նրա անունը: Բայց որտեղ է թաղված, հայտնի չէ: 22-ամյա այդ գեղեցկուհուն հայ մեծ վիպասան Ռաֆֆին հանդիպել է հոյ քաղաքում գավառի իշխանի հարեմում: Նա պատմում է, որ երբ մտել է հոյ, իր մոտ են եկել գավառի իշխանի մարդիկ և հարցրել նրա ով լինելը: Նա ներկայացել է որպես անգլիացի բժիշկ: Երբ այդ մասին տեղյակ են պահել իշխանին, նա Ռաֆֆուն հրավիրել է բուժելու իր հիվանդ որդուն և կնոջը: Դեռ ողբերգական պատերազմը, ով կրոնափոխված հայ է լինում, բոլոր մանրամասնությունները պատմում է վիպասանին: Իր «Ճանապարհորդություն Դարսկաստան» ուղեգրության մեջ Ռաֆֆին գրում է. «Նա պատմեց, որ տիկինն ազգով հայ է եւ Ա. գավառի մելիք Թ.-ի աղջիկն է: ...Նա պարսիկ իշխանին յուր կողմն գրավելու համար՝ ընձայեց նրան յուր մի հատիկ գեղեցիկ աղջիկը, որ արդեն նշանված էր մի հայ երիտասարդի համար: Փեսան, երբ որ լուսն է, թե յուր սիրուհին պետք է տարվի իշխանի կանանցը, մի քանի ընկերներով գալիս է եւ ճանապարհը կտորն է, որ ազատե նրան: Բայց բռնվում է եւ քաղաքի հրապարակում գլխատվում է...» / Ռաֆֆի, հ. 9, էջ 42,43: Փեսացուի մահվան լուրը լսելուց հետո նա զամվում է անկողնում: Լինելով բժիշկ Ռաֆֆին կարողանում է որոշ չափով մեղմել այդ դժբախտ աղջկա վիշտը: Ու հետո պայմանավորվում են դռնապանապետի հետ, որ վերջինս կազմակերպի աղջկա փախուստը: Թե հետագայում ինչ ճակատագիր է ունենում այդ պայմանավորվածությունը, մեզ արդեն հայտնի չէ:

Մելիք Թանգի երկրորդին փոխա-

րինած Մելիք-Ռուկասի իշխանությունը կարճ է տևում: Ինչպես վկայում է հայ մեծ ազգագրագետ Երվանդ Լալայանը. «Երկու տարուց հետո ռուսները վերջացրին մելիքությունը»: Թեև թվականությունը չի նշված, այդուհանդերձ կարելի է կարծել, որ դա կապված էր ցարական Ռուսաստանի նոր վարչատարածքային բաժանումների հետ: 1868 թվականին ստեղծվեց Ելիզավետպոլի նահանգը, իսկ Սիսիանը Չանգեզուրի գավառի կազմում մտավ այդ նահանգի մեջ:

## ՈՐՊԵՍ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Բռնակորը միշտ էլ եղել է Սյունիքի ազգային-ազատագրական պայքարի առաջին գծում: Բռնակորցիները Տեր Ավետիսի գլխավորությամբ ապավեն կանգնեցին Դավիթ-Բեկի ազատագրական պայքարին: Հատկապես նրանք իրենց փառքով պատկեցին 20-րդ դարի սկզբների մահ ու կենաց կռիվներին: 1905 թվականը պատմության մեջ մտավ որպես հայ-թաթարական ընդհարումների տարի: Առաջին ընդհարումը տեղի ունեցավ 1905-ի հունիսի 25-ին: Նախիջևանի կողմից եկած մի հարյուր կողակի միջամտությունից հետո կռիվը դադարում է: Սակայն օգոստոսի 16-ին թուրքերի ձեռքով ենթարկվող մոտ սուրբերի ձեռքով ենթարկվող 4 բեկ՝ Սաֆրազբեկյաններից և Մելիք-Թանգյաններից, որը հուզումների մեծ ալիք է բարձրացնում Սիսիանում:

Շրջանի ինքնապաշտպանության գործն իր օգնականի՝ Դրաստամատ Կանայանի հետ ղեկավարում էր Քեռին Արշակ Գավաթյանը: Գալով Սիսիան, նա իր շտաբը տեղավորում է Բռնակորում: «Ին Բռնակոր գալու օրն իսկ Քեռին կարգադրեց, որ զինուոր առնեն և անցնեն Թագա գիւղը որ հանդիսանում էր շրջանի գիւղերի սիրտը և մի տեսակ հանգույց էր դեպի Մազրա տանող ճանապարհի» / 3. Գեւորգյան, «Դրո», Երեւան, 1991թ., էջ 213: Դրոն կատարում է Քեռու հրամանը և ընդամենը մի 10 հոգով մեկնում Թագա գյուղ /ներկայումս՝ Թասիխ/: Նույն երեկոյան այստեղ է գալիս նաև Բռնակորի քահանայի տղա, Վահան Խորենու մեծ եղբայրը, Դավիթյանը՝ 15 հոգուց բաղկացած զինված ջոկատով: Առավոտյան Դրոն եկեղեցու մոտով պետք է հանդես գար: Սակայն հանկարծ կրակոցներ են լսվում: Աղմուկ-աղաղակը տարածվում է գյուղով մեկ: Սիսիանի /ներկայումս՝ Հազարավան/ թուրքերն անցնում են հարձակման: Բռնակորից նոր օգնական ուժեր են գալիս: Այստեղ է հասնում նաև Քեռին: Թուրքերն, աստիճանաբար տեղի են տալիս: Քեռու ուռնակներին արձագանքելով, բռնակորցիները մտնում են գյուղ: Հատկապես ղեկտեմբերին սկսեցին ակտիվանալ Արուղի և Վաղուղի գյուղերի թաթարները: Նրանք փակում էին Գորիս գնացող ճանապարհը, կատարում սպանություններ: Դեկտեմբերի 25-ին հայերը հարձակվեցին Արուղի գյուղի վրա: Թուրքերը մեծ զոհեր տալով, փախան Վաղուղի: Այստեղ մարտն ավելի թեժ բնույթ ստացավ: Թուրքերը մարտի դաշտում թողեցին 60, իսկ հայերը՝ 22 զոհ: Այս կռվում ընկավ նաև Թանգի-բեկ Մելիք-Թանգյանը, իր նախնական Ստեփան Ստեփանյանը, ովքեր թաղված են Բռնակորի «Վիրի մահիկ» գերեզմանատանը: Ընդհարումները դադարեցին միայն 1906 թվականի կեսերից հետո:

Սակայն 1918 թվականին սկսվեցին նոր խնդրումներ: Այդ շրջանում էր, որ Սիսիանին ապավեն կանգնեց Անդրանիկը: Այդ օրերին նա հենվում էր Սիսիանի 3 խոշոր գյուղի՝ Բռնակորի, Անգեղակորի և Դարաքիլիսայի /ներկայումս՝ Սիսիան/ վրա: Բռնակոր

ը շատ արագ վերածվում է Անդրանիկի ինքնապաշտպանության կազմակերպման երեք ժամրոթյան կենտրոններից մեկի, որը փաստորեն 1918-ից մինչև 1922 թվականը շրջանի կենտրոնն էր: Մինչև հիմա էլ մարդիկ հիշում են նրա բոցաշունչ ելույթները Բռնակոր, Ույծ, Դարաքիլիսա /այժմ Սիսիան/ գյուղերում: Հայտնի է նրա կողմից Բռնակոր գյուղում հրավիրված ժողովը: Ասում են, թե «Աղալոյեց մեյդան» էր հավաքվել ողջ գյուղը: Մարդիկ եկել էին տեսնելու եւ լսելու կենդանի Անդրանիկին: Մարդիկ կարոտ էին նրա խոսքին: Պատրաստ էին կատարելու նրա բոլոր առաջադրանքները: Այդ ժամանակ Բռնակորում նույնպես տեղավորված էին Անդրանիկի գորախմբի առանձին ջոկատներ, որոնց զինվորները բաժանվել էին տների վրա: Թաղերում ստեղծվել էին, այսպես կոչված, մայրապետեր, ովքեր կարգավորում էին բոլոր հարցերը, հոգում զորաջոկատի հոգսերը: Փաստորեն այդ ժամանակ Չանգեզուրը եզակի հայկական շրջան էր, որ գերծ մնաց թուրքական ավերածություններից: Սիսիանը երբեք չի մոռանում Անդրանիկին: Նա իր հերթին երբեք չի մոռանել սիսիանցիներին: Սի առիթով ասել է. «Եթե առիթ ունենաք, հաճեցեք իմ բարեկեցիկ հարցերը տալ Զանգեզուրի, Դափնանի և Սիսիանի ժողովուրդներին: 1919 թվականի մարտի 25-ին Զանգեզուրից Անդրանիկի հեռանալուց հետո երկրամասը բաժանվում է երկու պաշտպանական հատվածների՝ Կապար-Գողթի /Կապան, Գողթան, Գեմալա/ և Սիսիանի: Կապար-Գողթի զինված ուժերի հրամանատար է նշանակվում Գարեգին Տեր-Հարությունյանը՝ Նժդեհ , որն այստեղ է գալիս 1919թ. օգոստոս ամսին, իսկ Սիսիանի զինված ուժերի հրամանատար՝ ծնունդով Կապանի Վերին Խոտանան գյուղից Պողոս Տեր-Դավթյանը, ում շտաբը հիմնականում գործում էր Բռնակորում: Այդ շրջանի ղեկավարի ակնանտես ու մասնակից բռնակորցի Արտեմ Բայանն ասում էր, որ նա այս կողմերն էր ուղարկվել Ստեփան Շահումյանի կողմից: Հայտնի է, որ Նժդեհյան մաքառումների արդյունքում մեծք պահպանեցինք Սյունիքի ինքնությունը: Այդ պայքարում նույնպես իրենց փառքով պատկեցին նաև բռնակորցիները: Նժդեհի կենսագիր Ավոն՝ իր «Նժդեհ» աշխատության մեջ նշում է Սիսիանից աչքի ընկած հետևյալ զինվորական և քաղաքական գործիչներին անունները՝ «Վահան Խորենի-Բռնակորցի, խորհրդարանի անդամ, բարձրագույն կրթությամբ, թաղված է Գորիսում, Սերգեյ Մելիք-Յուլյան-Սիսիանցի, համալսարանական, Զանգեզուրի նահանգապետ, մեռած Թեհրանում, Համբարձում-շենաթաղցի, քաջ վաշտապետ, Կրթող Հովհաննես-շենաթաղցի, իսկ նա մարմնով, զարգանդ, ազդող ծայրով, վայրենի տեսքով, Շխարի ծոցի թուրքերը սրանից սարսափում էին, Չախար Տեր-Ղազարյան-Սիսիանցի, հրամանատար, Պողոսի/Պողոս Տեր-Դավթյան, 3.Ա./ աջ բազուկը, Սիսիանի քաջ կոմիսար, Սիկուլայ Կրմեյանց-Սիսիանի Բռնակոր գյուղից, գործիչ, Դավիթ-դարբասցի, հին գործիչ, մարտիկ, Սարգիս-անգեղակորցի, վաշտապետ, Մելիք-Թանգյան Սիմոն-բեկ-Բռնակորցի, մատակարար, մեռած Թավրիզում, Աստղիկ Սաֆրազբեկյան-դարաքիլիսեցի /Բռնակորցի վերաբնակված/, որբանոցի կառավարիչ, Սիշա Սաֆրազբեկյան-դարաքիլիսեցի /Բռնակորցի վերաբնակված/, սպա, Ավագ Բունիայան-Բռնակորցի, կոմիսար, Սիսակ Բունիայան-Բռնակորցի, վաշտապետ, սպանվեց հակաբուլշեիկյան կռիվներում, Առուստամ Բունիայան-Բռնակորցի, օգնական վաշտի հրամանատար»



# Մեր ազգային անապարծության մասին

ՍԿԻՉԲԸ ԷՏ 2

թյունը չի դառնում՝ ճշմարտության բանալին ռուս հետազոտողին է հուշել: Այ, այդպես: Ասվածը հիմնավորելու համար որպես անառարկելի փաստ հողվածի հեղինակները նույն տեղում նշում են, որ դա Վինչին էլ իր նշումները ծածկագրել է «հայերեն»: Ակամա հիշում ես ամեկողտը հայտնի գլուխգոլմանի մասին, որ ասում է, թե այդ մասին ճապոներեն է կարդացել: Դուք կարդո՞ւմ եք ճապոներեն՝ զարմանում են գրուցակիցները: Համարյա նույն չինարենն է՝ համեստորեն պատասխանում է նա:



Ռեդիկ Հայրապետյան

տասնյակի հասնող նման օրինակներ կարելի է բերել , բայց ընթերցողը դրանց մասին մեզանից լավ գիտի:

Իսկ երբ «բարի նպատակով» պատեհ, թե անպատեհ օրինակ ենք բերում, մեր ձեռքբերումները համեմատում հարեանների հետ՝ այդ ընթացքում չմոռանալով մի քանի անգամ շեշտել նրանց «կնդակավոր» լինելը, «սեւ» եւ «սպիտակ» ոչխարներ արտահայտությունները՝ ակամայից ջուր ենք լցնում նրանց ջրաղացին: Ինչ է, չի՞ կարելի ձեռնպահ մնալ դրանից: Իհարկե, կարելի է, եւ այն էլ շատ փայլուն ձևով: Մեր հարեանների ազգային դիմանկարն ամփոփված է գերմանացի մեծ փիլիսոփայի մեն մի հատիկ արտահայտությամբ մեջ՝ «այստեղով թուրք է անցել»: Շատ թե քիչ գրագետ մարդը, աշխարհի որ ծագում էլ որ գտնվի, անկախ ազգային պատկանելությունից գիտի, որ այս յուրահատուկ ազգն իր ունեցած ամեն ինչը ձեռք է բերել գողության ու թալանի միջոցով. իր երկրի տարածքը, մշակույթը, ամուրը, պատմությունը, ամեն, ամեն ինչ: Իմ անծանալ կարծիքն է, որ այս մասին ճիշտը ու ճիշտը խոսելը մեզ ամենեւին էլ պատիվ չի բերում, մանավանդ որ մենք էլ քիչ անելիք չունենք:

Մենք իրավացիորեն հպարտանում ենք մեր հազարամյա վանքերով ու եկեղեցիներով, բայց երբեմն աչք ենք փակում դրանց վեմերին նորոգյա վանդակների հայաստազրառույթ-ստորագրությունների վրա եւ համեմատում մոտիկ ու հեռու հարեանների չունեցածի հետ: Ինչ լավ է, չէ՞:

Ինձ պատմել են, որ ԱՄՆ-ից եկած կամավորները մարզի գյուղերից մեկի տարածքում աղբահավաքություն են կազմակերպել, փորձել են բնության մի փոքրիկ անկյուն մաքրել կենցաղային աղբից: Եվ գիտե՞ք ինչպիսին է եղել տեղաբնակների արձագանքը: Նրանցից մեկը սրամտել է՝ ասեք թող գամ , մեր տան մոտ այդ «բարիքից» շատ կա: Այ, ինչ գեղեցիկ հրավեր է, եւ ինչ տեղին, ճշգրիտ հասցեով:

Մեղուներ էի պահում գյուղիս տարածքում՝ քաղաքակրթությունից հեռու: Ամենամոտը ծննդավայրս մայրուղուն միացնող գյուղամիջյան

ճանապարհն էր, որով շաբաթական մեկ կամ երկու ավտոմեքենա հազիվ էր անցնում. բենզին չկար:

Մի օր էլ հանկարծ ճանապարհին մի ավտոբուս հայտնվեց: Այո, ոչ թե երեւաց, այլ հայտնվեց: Ավտոբուս էլ չէր, այլ «Իկարիուս»՝ 40 տեղանոց: Ձեռքով ու ոտքով հասկացրի, որ կանգնի: Կանգնեց: Վարորդն իջավ ու գոռաց՝ ի՞նչ է եղել: Ասացի՝ հեչ, եկեք մեղր ուտելու: Երեւի մտածեց, որ ցնդել են: Մի քիչ ավելի մոտեցավ: Արդեն խոսում ենք առանց գոռալու: Գիտե՞ս , թե ավտոբուսում քանի մարդ կա: Թեկուզ լիքը լինի: Հո չե՞ս ցնդել: Չէ, դեռ չէ:

Բա հաց ունե՞ս: Չէ, չունեմ: Ավելի ճիշտ ունեմ, բայց երեւի քիչ է, երեք բլրոն: Մի վախեցիր, 12 հոգի են:

Իսկ թե ինչու սա պատմեցի, ընթերցողը կհասկանա քիչ հետո:

Արեւուտքից ամեն, ամեն ինչ շատ արագ հասնում է քաղաքամայր Երեւան, իսկ այնտեղից էլ, ճիշտ է, երբեմն դանդաղ, բայց համառոտ, նպատակալաց ձեռով շարժվում եւ վերջապես հայտնվում է նաեւ մեզ մոտ՝ պրովինցիայում: Այս պահին խոսքը վերաբերում է բնական աղբյուրները, ամսառները, պուրակները, հանգստի գոտիները վարձավճարով տրամադրելուն: Մի քանի տարի առաջ ո՞վ կմտածեր, որ քո անտառում, քո ծառի շվաքում նստելու համար քեզանից փող կպահանջեն: Եկան այդ ժամանակները: Աստված բեթարից փրկի...

Ինչպե՞ս է դա արվում: Ահա այդ քայլերի հաջորդականությունը: Ուժեղ մատնի հիմնած անտառից չափել է մոտ մեկ հեկտար, չափառի մեջ առել ու «դավթարով» իրենով արել, այդ անտառի փայտից կացնի կոթ արել, այդ կացնով այդ անտառի ծառերից սեղան-նստարան սարքել, տեղադրել ու ասել՝ էստի համեցեք: Մնում է ավելացնել, որ, օրինակ, Հալիծորի անտառի այդ հատվածում հաճախորդներին գտնվում ու թալանում են, իսկ պետությունից էլ գողանում, պետությանը խաբում: Իսկ թե ինչպես, եթե հարցնող լինի, կասեմ: Բայց պատմածիս նպատակը միայն սա չէր: Այսօր ժամգոտած մեխը ծախում ենք, եւ այն էլ խաբելով, դա լավ է, որովհետեւ սովորել ենք ելքուպայից, իսկ որ կարող էինք անվճար առատ սեղան բացել նույնիսկ օտարի համար, դա վատ էր, որովհետեւ խորհրդայինի հոտ էր գալիս:

Ինչպե՞ս լռես, կամ ինչո՞ւ լռես, երբ քո աչքի առաջ կատարվածը, ինչ-որ տեղ նաեւ քո մասնակցությամբ կատարվածը, սոցցանցերում, նաեւ լուրջ լրատվամիջոցներում ներկայացվում է 180 աստիճանով շրջված, մասնակիցների բազմակի մեծ թվով ու այլ կազմով: Սա այն դեպքում, երբ դու շատ թե քիչ ծանոթ ես փաստին: Իսկ անհայտ փաստերը տասնյակ անգամ ավելի շատ են, ու դրա համար էլ դյուրհավատներիս համար՝ դյուրամարս:

Հողվածի վրա աշխատելիս համացանցում հանդիպեցի տասնյակ նման փաստերի: Դրանցից առանձնացնում են մի հրապարակում: 2009 թվականին Երեւանում Տիգրան Պետրոսյանի եւ Գարեգին

Ղազարյանի հեղինակությամբ հայերեն լույս է տեսել «Ծագումով հայազգի 1000 գեներալներն ու ադմիրալները» գիրքը: Ըստ հեղինակների հիտլեռյան մարշալ Գուրեռյանը, լեի Յարուզելսկին, ռուս Սուվորովն ու Կուտուզովը, ազգությամբ վրացի, ուկրաինացի, հրեա, հայրուրավոր գինվորական ու պետական գործիչներ՝ ծագումով հայ են:

Վերլուծելով նշված «աշխատությունը» մեր հայրենակից, տեխնիկական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության գինվորական ակադեմիայի անդամ, ավելի քան 240 գիտական աշխատության հեղինակ, այդ թվում «Հեղափոխություն եւ հակահեղափոխություն. հայկական հետք», «20-րդ դարի գինվորական գիտնական, կոնստրուկտորներ, արտադրության կազմակերպիչներ, փորձարկողներ հայերը» գրքերի հեղինակ Արկադի Սարգսյանը, ինչպես ասում են՝ քարը քարի վրա չի թողնում (Նովոյե վրեմյա, WWW.RV.AM): Մասնավորապես փաստերով ապացուցում է, որ, օրինակ, «հայրենասեր» հեղինակների կողմից հայացված կունիկ Սուրադ Կապլանովի հայրը Ռաշիդ Խան Կապլանովը, անձնական սերտ կապերի մեջ է եղել հայ ժողովրդի դահիճներ Թալեաթ, Ենվեր, Ջեմալ փաշաների հետ, հետագայում եղել է Ադրբեջանի մուսաֆաթական կառավարության անդամ:

Բերված օրինակն իր ձեռով ու բովանդակությամբ եզակի չէ: Առանց լուրջ ջանքերի մեկ-երկու ժամվա ընթացքում համացանցում կարող եք նմանատիպ մի քանի օրինակ «բջիգորել»: Իսկ հայրենասիրության այն ձեւը, որ վաղուց (մոտ 20-25 տարի) սկսել է իշխող դառնալ ուղղակի հիասթափեցնելու աստիճան գյուղ ու պատճառում, կամ էլ ցավացնելու աստիճան հիասթափեցնում է:

Մեր հայրենակիցներից շատերը, չդիմանալով կյանքի առաջադրած դժվարություններին, 20-30 տարի առաջ սկզբում միայնակ, հետո նաեւ ընտանիքով լքեցին հայրենիքը՝ տուրք տալով «որտեղ հաց, այնտեղ կաց» կործանարար փիլիսոփայությանը: Իմ բարեկամ, հանրության կողմից բարձր գնահատվող երգահաններից մեկը, որ այն դժվարին տարիներին Աժ պատգամավոր էր, պատմում է, որ մի անգամ, Ազգային ժողովի շենքից դուրս գալիս, մուտքի մոտ նրան է մոտենում մի կին եւ օգնություն խնդրում: Իմ բարեկամը հանում է դրամապանակը, եւ հենց այդ պահին էլ նրանց հայացքները հանդիպում են: Կինը ճանաչում է երգահանին, շտապ-շտապ արտասանում «Ուրեմն դու չես գնացել, ուրեմն կապրեմք» ու առանց սպասելու ակնկալվելիք օգնությանը՝ հեռանում:

Այո, երկրից սկսեցին «ժամանակավորապես» հեռանալ մտավորականները եւ դեռ շարունակում են հեռանալ: Չենք ասում, թե կյանքի պայմաններն արմատապես փոխվել են, բայց եւ այնպիսին չեն, ինչպիսին էին 20-25 տարի առաջ: Ու չնայած դրան, մեկնածները չեն շտապում վերադառնալ: Ընթերցողս պետք է

հասկանա, որ այստեղ, նրանց «հայրենիքում» նրանց ներկայիս կարգավիճակում ավելի լավ են ընդունում, քան այստեղ ապրող, ստեղծագործող նրանց կոլեգաներին: Տեսնես աշխարհում կա՞ որիչ մի երկիր, որի զավակներն այդ երկրում կայանան որպես արվեստագետ, հետո ժամանակավորապես մեկնեն արտերկիր ու մի քանի տարի անց այնտեղից սկսեն հյուրախաղերով վերադառնալ հայրենիք: Չէ, դժվար թե, այստեղ էլ մենք առանձնահատուկ ենք:

Համ գայրանում են, համ էլ զարմանում: Հարյուր անգամ համոզվել են, որ «գայրանալ» ոչ մեկին չի անհանգստացնում. ո՞վ է նման որակներով բան չափում: Մնում է զարմանալ, եւ էլ ուզածիս չափ զարմանում են: Չեն զարմանում, որ Լուս-Անցելետում ապրող հայերի թիվը հասել է մի այնպիսի մեծության, որ «հայ երգի արքա» Թաթևան այդ թեմայով օպերա գրի, բայց զարմանում են, որ բազմամիլիոնանոց այդ քաղաքի խաչմերուկներում հայ խոսքը հնչում է նաեւ աֆրոամերիկացիների բերանից՝ հայիոյանքի տեսքով, որ այդ նահանգի բանտերում ավելի շատ հայ կանայք կան, քան մեր երկրի համապատասխան տեղերում՝ տղամարդիկ:

Փորձում են հասկանալ իմ իմացած «Հայաստան», «հայրենիք» հասկացությունների իմաստը, մի զարմացեք, հա, փորձում են հասկանալ, նաեւ ստուգել, դրանք սնա՞ն են արդյոք հայրենիքից մեկնած ու հայրենիքը հեռվից հեռու սիրող իմ հայրենակիցների զգացումներին: Չէ, դժվար թե: Եթե նման լինեին, չէին դիմանա, կվերադառնային: Բայց նրանցից շատերի համար այդ ճանապարհը նման է ջաղացի ճանապարհի՝ այլուր վերջացավ՝ գալիս են, իրենց արդեն արդու ու էլի հետ գնում: Գնացող-եկողներին.

Երբեւէ մտածե՞լ եք, թե մեր մեծ պոետը մարմնի ինչ դող է ունեցել, երբ գրչի տակից դուրս են եկել ու մերը դարձել «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ, ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ» տողերը: Առաջին անգամ կարդալիս կամ լսելիս նույն դողը ձեռք մարմնով չի՞ անցնում: Իսկ հիմա՞, ա՛յժմ: Հիմա ի՞նչ: Հիմա ոչինչ, հիմա մեր երկիրն է: «Ուրիշ տեղ» դառնել, մեր երկիր չեն ուզում գալ, մեր երկրում չեն կարողանում մնալ: Ու երեւի դրա համար էլ ուրիշ տեղ գնալ չկարողացող պոետը մի օր էլ ասաց՝ «գլուխս առնեմ կորչեմ ես եւ քաղաքից՝ անզորավար ամբոխների բանակից...»: Նորից գնացող-եկողներին. զարմանում են, որ դուք՝ ազգիս լավագույն զավակները, այլ երկրում (կարդա՞ արտերկրում) ինչպես եք օտարներին բացատրում, որ դուք մարդկության երկրորդ վերածննդի երկրից եք, որ դուք Նոյի հետնորդներն եք, ու որպես դրա պապացույց հայրատությանը կրկնում մեր մի այլ մեծի հայտնի խոսքերը՝ ուղբերս դեռ թաց են ջրիեղեղի ջրից:

Ախր գալու է մի օր, որ ձեզ հակադարձ հարց են տալու՝ ինչո՞ւ ձեր թաց ոտքերը ձեր երկրում չեք չորացնում:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**Հաղորդագրություն**  
Այունիցի մարզի ընդհանուր իրավասու-թյուն դատարանում քաղաքացիական գործ է հարուցվել Նելլի Հենրիկի Գրիգորյանի կողմից եղբորը՝ Նվեր Հենրիկի Գրիգորյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին:  
Բոլոր անձանց ու կազմակերպություններից, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Նվեր Հենրիկի Գրիգորյանի (ծնված 11.11.1985թ. հաշվառված ք. Սիսիան, Շիրվանգաղեի 12/22 հասցեում) գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Այունիցի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիանի գտնված վայր՝ ք. Սիսիան, Գ.Նժդեհի 6, հեռախոս (0283) 2-32-20:

**ՆՆՈՐՀԱՎՈՐԱՆԵ**  
«Այունյաց երկիրը» շնորհավորում է թերթի աշխատակից Աննա Պետրոսյանին մայրամալու կապակցությամբ, դատերը՝ Իրինային, մարդուն առողջություն եւ անհոգ մանկություն:

**ՎԱՃԱՎՈՒՄ** է երեք սենյականոց բնակարան Կապանի Թումանյան 9 շենքի 5-րդ հարկում (թատրոնի հարեանությամբ): Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (077) 062802 հեռախոսահամարով:

**Այունյաց երկիր**

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՐԱՏԱՐԱՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՆ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾՈՒԿ ՊԱՏԱՆԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Հախումյան 20/32: Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 80 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակների չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՐՎԱՅԻՐ - ԾԱՆՈՒԹՅՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01U 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 27.02.2015թ.: